



ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ

Երկակի Չափանիշ

Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանի վերջին որոշումը կարելի է միայն մասնակի յաղթանակ նկատել հայութեան համար: Դատարանը անփոփոխ պահեց Ստորին Պալատի որոշումը, յայտարարելով թէ Հայկական Ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող Զուլիցերիոյ օրէնքը կը խախտէ մարդու ազատ արտայայտուելու իրաւունքի եւ հետեւաբար, թուրք ազգայնական գործիչ Տողու Փերինչէէ, որ «միջազգային սուտ» որակած էր Հայոց Ցեղասպանութիւնը, չի կրնար դատական հետապնդումի ենթարկուիլ:

Եւրոպական լրատուամիջոցները լայն տեղ յատկացուցին այս որոշումին: Մտաւոր յողուստիւններ Դատարանի այս քայլը գտան տարօրինակ, նկատելով նաեւ նախկին Դատարանի վերաբերմունքը, երբ հարցը կը վերաբերէր Հրեաներու Հուլոյնի սպանութեան վրէժշարժումը: Ցատկապէս վրդովմունքով յայտնեցին գուրեհեական թերթերը, որոնք եկան դիտելու տալու, որ հրեական Հուլոյնի սպանութեան ենթարկուածները կը նկատուին գեղապատուելիքներ Կրիստոսի մարտիրոսներ, իսկ նոյն զննչատակարարները չեն արժանանար Հայոց ցեղասպանութիւնը ժխտողները:

Բացի Զուլիցերիայէն, եւրոպական այլ երկիրներ եւս Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրեականացնելու ուղղութեամբ քայլերու կը դիմեն: Յատկանշական է Ֆրանսայի պարագան, ուր երկրի խորհրդարանը 1912-ին որոշում կայացուց այս ուղղութեամբ, սակայն Ֆրանսայի Սահմանադրական Դատարանը չեղեալ յայտարարեց գայն, ըսելով որ խորհրդարանին կողմէ ընդունուած որոշումը կը հակասէ երկրի սահմանադրութեան:

Հայամէտ խորհրդարանականներ չեն յուսահատած եւ կը շարունակեն իրենց ջանքերը, նոր քանակածով մը հանդէս գալու եւ գայն սահմանադրականօրէն աւելի ամուր հիմքերու վրայ դնելով՝ անբեկանելի դարձնելու ուղղութեամբ: Սակայն, այսօրուայ դրութեամբ, Ֆրանսայի մէջ եւս կը տիրէ տարբեր չափանիշ Հայկական եւ Հրեական ցեղասպանութիւններու նկատմամբ դատարաններու վերաբերմունքին առումով:

Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանի անցեալ շաբթուայ որոշումը անգամ մը եւս կու գայ ցոյց տալու թէ, հայութեան առջեւ կան տակաւին բազմաթիւ խնդրեղոտներ: Հայոց Ցեղասպանութիւնը, եւ նաեւ այլ ցեղասպանութիւններ, համայն մարդկութեան դէմ գործադրուած ռմբակներ են եւ կարելի չէ տարբեր վերաբերմունք ունենալ մէկի կամ միւսի նկատմամբ:

ժամանակն է, որ վերջ տրուի երկակի չափանիշներուն:

«ՄԱՍԻՍ»

Հայկական Կողմի Փաստաբանները Յաղթանակ Կը Նկատեն Եւրոպական Դատարանի Որոշումը

Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանի Մեծ Պալատը Հոկտեմբերի 16-ին վճիռ կայացուց «Փերինչէէ ընդդէմ Զուլիցերիա» դատական հարցին՝ յայտարարելով, որ տեղի ունեցած է Մարդու իրաւունքներու եւրոպական Ուխտի 10-րդ յօդուածի խախտում եւ այդ հիմքով մերժեց Զուլիցերիոյ դիմումը վճարեել դատարանին:

Միաժամանակ, դատարանը բաւարարեց, որպէս երրորդ կողմ ներգրաւուած Հայաստանի Կառավարութեան պահանջները եւ Ստորին Պալատի վճիռէն հանեց Հայոց ցեղասպանութիւնը կասկածի տակ դնող գնահատականները:

2008-ին Զուլիցերիական դատարաններէն մէկը դատապարտած էր Թուրքիոյ Աշխատանքային Կուսակցութեան առաջնորդ Տողու Փերինչէէին՝ Հայոց ցեղասպանութիւնը ժխտելուն համար: Փերինչէէ դիմած էր ՄԻԵԴ, եւ 2013-ին եւրոպական Դատարանի Ստորին Պալատը որոշած էր, որ Զուլիցերիան դատարանի վճիռը Մարդու իրաւունքներու Ուխտի 10-րդ յօդուածի ստնահարում է: Զուլիցերիոյ կառավարութիւնն իր հերթին դիմած էր ՄԻԵԴ-ի Մեծ Պալատ:



Հայկական կողմի փաստաբաններ ձեֆրի Ռուպրիչը եւ Ամալ Ալամըտին-Քրունի եւրոպական Դատարանի նախորդ նիստերէն մէկուն ընթացքին

Հայաստանի կառավարութեան շահերը պաշտպանող փաստաբաններ՝ Բրիտանացի ձեֆրի Ռուպրիչը եւ Լիբանանցի ծագում ունեցող Ամալ Ալամըտին-Քրունի գոհունակութիւն յայտնեցին եւ յաղթանակ նկատեցին ստորին դատարանի որոշումէն Հայոց ցեղասպանութիւնը կասկածի տակ դնող գնահատականներու դուրս հանուելը:

«Թուրքիա կրնայ շարունակել ժխտել այդ իրողութիւնը, բայց այս որոշումէն յետոյ անոնք այլեւս չեն կրնար օգտագործել Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանի ստորին պալատի վճիռը», Հայկական հեռատեսիլին

Շաբ-ը էջ 5

ՍԴՀԿ Կը Յստակացնէ Իր Դիրքորոշումը՝ Սահմանադրական Փոփոխութիւններու Առթիւ



ՍԴՀԿ Հայաստանի կազմակերպութեան Համագումարի աւարտին հրաւիրուած մամուլային ակումբի ընթացքին ելոյթ կ'ունենայ նորընտիր վարչութեան ատենապետ Նարեկ Գալստեան

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի կազմակերպութեան Համագումարի աւարտին հրաւիրուած մամուլային ակումբի մը ընթացքին, Հայաստանի նորընտիր վարչութեան ատենապետ Նարեկ Գալստեան յայտարարեց, որ ՍԴՀԿ-ն միշտ ալ կողմնակից եղած է խորհրդարանական կառավարման համակարգին եւ հետեւաբար կողմ է սահմանադրական առաջարկուող փոփոխութիւններուն: Ան աւելցուց սակայն, որ ՍԴՀԿ-ն մաս պիտի չէ ակումբի՝ իշխանական քարոզարշաւին:

«Քաղաքական նախաձեռնութիւններուն ընտրովի ենք մօտենալու եւ աշխատելու ենք առանձին մասնակցել», ըսաւ Նարեկ Գալստեան, աւելցնելով, որ ՍԴՀԿ-ն մտավախութիւններ չունի, որ իրենց նման դիրքորոշումը կրնայ ճիշդ չընկալուիլ եւ ստուեր կը գցէ իրենց ընդդիմադիր կուսակցութեան դիմագծին վրայ:

«Եթէ որեւիցէ մէկը «ոչ»-ի կողմնակից է, նշանակում է Ռոբերտ Քոչարեանի կամ Լեւոն Տէր-Յար-ը էջ 4

Տեղի Ունեցաւ ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի 17-րդ Պատգամաւորական Ժողովը

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի 17-րդ Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, Հոկտեմբերի 11-ին, Փաստիճանայի Հնչակեան կեդրոնին մէջ:

Ողջոյնի խօսքերով հանդէս եկան Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամներ:

Պատգամաւորական ժողովն ունկնդրեց շրջանաւարտ Վարիչ Մարմնի երկամեայ տեղեկագիրը: Այս լուրջ եւ հիմնական վճարական ենթակայեց օրակարգի տարբեր հարցերը:

Գալիֆորնիոյ ինչպէս նաեւ Լուիզիանայի եւ Նեվադայի կուսակցական մասնաճիւղերն ու ենթակառոյցները մերկայացնող ժողովականներ իրենց միօրեայ հաւաքի ընթացքին վճարակցեցին ու համապատասխան քանակներ ընդունեցին, ազգային, ֆաղափական եւ կուսակցական հրատապ հարցերու վերաբերեալ:

Պատգամաւորական ժողովն ընթացաւ անկեղծութեամբ եւ հասկացողութեամբ ընդհանուր մթնոլորտի մէջ, որուն աւարտին ընտրուեցաւ Արեւմտեան Ամերիկայի նոր Վարիչ Մարմինը, յաջորդելու տարիներուն համար:

ՍԴՀԿ ՄԱՍԼՈՑ ԴԻՒԱՆ

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Իրավիճակը Հայաստանում Կտրուկ Փոխուժում է

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՑԵԱՆ

Նոր Սահմանադրութեան նախագիծն այսօր հրապարակուել է ԿԸՑ կայքում, եւ այն հանրաքուէի կը դրուի Դեկտեմբերի 6-ին: Այս ֆոնին, վերջին օրերին տեղի ունեցան մի շարք աղմկալի իրադարձութիւններ, որոնք վկայում են, որ Հայաստանում իրավիճակը կտրուկ փոխուժում է:

Այս իրադարձութիւնները միջազնային ներքին մի շարք գործընթացներ եւ ներքին իրավիճակը հանեցին առաւել լայն հարթութիւն: Հայաստանում զանգուածային կուսակցութեան մասին յայտարարեց Ռուսաստանի Հայերի Միութեան նախագահ Արա Աբրահամեանը, ով չթաքցրեց նաեւ բարձր պաշտօններ զբաղեցնելու հնարաւորութիւնը: Նա յայտարարեց, որ իր կուսակցութիւնը փողի կարիք չի ունենալու, այդպիսով փողի սուր կարիք զգացող հայկական կուսակցութիւններին ակնարկներ անելով, որ կարող է «կլանել» նրանց:

Այսօր յայտարարութիւն տարածեց ՀԷՑ-ի նոր սեփականատէր, ռուսաստանցի մէկ այլ միլիարդատէր Սամուէլ Կարապետեանը,

չի կարող իր ազդեցութիւնը չթողնել Հայաստանի ներկայիս օլիգարխի տնտեսա-քաղաքական համակարգի գործունէութեան վրայ: Ընդ որում, իրավիճակը յատկանշական է նրանով, որ Տիգրան Սարգսեանը պաշտօնանկ եղաւ հենց այդ համակարգի ջանքերով, որի արդիւնքում ձեւաւորուեց ներկայիս կառավարութիւնը:

Հետագայում է, որ վարչապետ Յովիկ Աբրահամեանն այսօր չբացուեց, որ կարող է գլխաւորել Սահմանադրական հանրաքուէի «այո»-ի շտաբը: Չի բացուում, որ նրա «համաձայնութիւնը» կապուած է վերոյիշեալ իրադարձութիւնների հետ, որոնք ինչ որ առումով վտանգի տակ են դրել ներկայիս համակարգի յետագայ կենսագործունէութիւնը ու հեռանկարը: Ըստ այդմ, Յովիկ Աբրահամեանը փորձում է նոր իրավիճակում դեր ստանձնել, որի հեռանկարները սակայն մնում են մշուշոտ:

Այսպիսով, Հայաստանի ներքին կեանքում կարծես թէ առաջանում է «դիմակայութեան» նոր գիծ, որը կարող է նոր ու անսպասելի զարգացումներ խթանել: Արդէն տեսակէտներ կան, որ Արա

Հայաստանը Մտնում է Ֆիլտրացիայի Նոր Փուլ

ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՑԻ

Հայաստանում բոլոր նախանշանները կան եզրակացնելու, որ քաղաքական կեանքը կամ այսպէս կոչուած՝ քաղաքական կեանքը մտնում է ֆիլտրացիայի նոր փուլ: Ընդ որում՝ այս երեւոյթը կարծես թէ տեղի է ունենում ե՛ւ ընդդիմադիր, ե՛ւ իշխանական դաշտում:

Ֆիլտրացիան Հայաստանում բաւական բուռն թափով սկսուեց 2008 թուականին: Լեւոն Տէր-Պետրոսեանի ակտիւ քաղաքականութիւն վերադարձը ստեղծեց նոր իրավիճակ, եւ նա գլխաւորելով ընդդիմադիր բեւեռը՝ ըստ էութեան ստիպեց այդ բեւեռում մի շարք ներկայացուցիչներին կա՛մ յայտնուել դասակարգման ստորին հորիզոնականներում, կա՛մ պարզապէս հանդէս գալ իշխանութեան ճամբարից: Այդպիսով, մինչ 2008-եան ընդդիմադիր-քաղաքական մի ողջ պլիադա ստիպուած, կամայ, թէ ակամայ դուրս գրուեց ակտիւ քաղաքականութիւնից: Այս իրավիճակն էլ իշխանութիւններին ստիպեց նոյն գործընթացը ապրել, ի հարկէ՝ ոչ նոյնքան բուռն, ինչքան ընդդիմադիր դաշտում: Դրանից յետոյ հաստատուեց մի որոշակի ստատուս քուօ, որն այսօր կրկին ենթարկուում է վերադասաւորման եւ ֆիլտրացիայի:

Ընդդիմադիր դաշտում դրան է ենթարկուում արդէն յետ 2008-եան «պլիադան», որի մի շարք ներկայացուցիչներ եւ ուժեր ներկայումս յարաբերութիւններ են պարզում, այդ գործընթացին, բնականաբար, ասպարէզ իջած նոր ուժեր են խառնուած, եւ այս ամէնի արդիւնքում ընդդիմադիր դաշտում ֆիլտրացիայի նոր փուլը, ըստ էութեան, դուրս կը թողնի ընդդիմադիր զգալի մի հատուածի: Միաժամանակ, առաւել ակտիւ ֆիլտրացիա է սպասուում իշխանական դաշտում: Այս ակտիւութիւնը, ըստ էութեան, պայմանաւորուած է երեւի թէ նրանով, որ տնտեսական ճգնաժամ է, եւ իշխանական կարկանդակը հարկ կայ կրճատելու: Դրա համար պէտք է կրճատուեն նաեւ այս կարկանդակի մօտ գտնուող ուժերը:

Այս գործընթացը արդէն իսկ բաւական բուռն թափ է հաւաքում: Իշխանական դաշտում յարաբերութիւններ են պարզում ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, սրան է միանում նաեւ Արա Աբրահամեանը, միաժամանակ՝ ՀՀԿ դաշտում մի քանի թեւ: Այստեղ են Յովիկ Աբրահամեանը, Սամուէլ Կարապետեանը, եւ կարծէք թէ երէկ միանալու յայտ է ներկայացուել Տիգրան Սարգսեանի անունից, քանի որ ԵՏՄ-ի նախագահները այդ կառուցի գաղթնաժողովում որոշել են, որ ԵՏՄ կոլեզիայի, ըստ էութեան ԵՏՄ գործադիր մարմնի նախագահի պաշտօնը պէտք է լինի ռոտացիոն, ռոտացիայի առաջին կողմը պէտք է լինի Հայաստանը, իսկ Հայաստանից էլ այդ պաշտօնում պէտք է նշանակուի ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Տիգրան Սարգսեանը: Սա իսկապէս շատ անսպասելի

որոշում էր, որը վկայում է, որ Տիգրան Սարգսեանը ստանում է Հայաստանի ներքին կեանքի վրայ ակտիւ ազդեցութեան, այսինքն՝ ներքինական խմբերի պայքարին խառնուելու հնարաւորութիւն: Այսպիսով, ինչպէս երեւում է, իշխանական ֆիլտրացիան այս անգամ կարող է լինել աւելի կոշտ ու նոյնիսկ դաժան, քան ընդդիմադիր դաշտում: Իհարկէ, պէտք է խոստովանել նաեւ, որ ֆիլտրացիոն նախկին գործընթացների էֆեկտը դաշտում մնացողների կամ գերականների որակական փոփոխութիւնների տեսանկիւնից շատ թույլ է եղել, առաւելապէս զգացուել է շատ կարճ ժամանակում եւ ըստ ամենայնի կրել է լոկ կոնիւնկտուրային բնույթ, ու շատ կարճ ժամանակ անց ֆիլտրացիայի արդիւնքում գերակայ ե՛ւ իշխանական, ե՛ւ ընդդիմադիր սեգմենտները արագօրէն վերադարձել են նախա-2008-եան աւանդույթներին ու մտածողութեանը, որի արդիւնքում շարունակել են ամէն մէկն իր դաշտի ընդհանուր դեգրադացիան: Սակայն, ինչպէս միշտ, ամէն գործընթաց իր մէջ բերում է փոփոխութեան հանրային յոյսեր:

Պէտք է խոստովանել, որ գոնէ ընդդիմադիր դաշտում այդ յոյսերի նախադրեալներ կան: Այլ հարց է, թէ ի տարբերութիւն նախկին յոյսերի՝ ինչքանով են այս նախադրեալները աւելի հաստատուն, խորքային եւ գաղափարական, ոչ թէ իրավիճակային ու կոնիւնկտուրային:

«ԱՌԱԶԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՀԷՑ-ը Հայաստանում պարզապէս Էներգետիկ օբիեկտ չէ, այլ իշխող տնտեսա-քաղաքական համակարգի առանցքային ռեսուրսը, որով ապահովում էր համակարգի ներքին ստատուս-քուօն եւ ընդհանրապէս քաղաքական դաշտի «կայունութիւնը»

որն աւելի շատ նման էր քաղաքական յայտի: Իր յայտարարութեան մէջ Կարապետեանը նշում է, որ «3 միլիոն բնակչութեան շահը մեզ համար, անկասկած, առաջնային է եւ չի կարող համեմատուել որոշ կոռումպացուած աշխատակիցների ու անբարեխիղճ սպառողների շահի հետ»:

ՀԷՑ-ը Հայաստանում պարզապէս էներգետիկ օբիեկտ չէ, այլ իշխող տնտեսա-քաղաքական համակարգի առանցքային ռեսուրսը, որով ապահովում էր համակարգի ներքին ստատուս-քուօն եւ ընդհանրապէս քաղաքական դաշտի «կայունութիւնը»: «Անբարեխիղճ սպառողները» այդ համակարգի ներկայացուցիչներն են, որոնք իրենց քուտտաների շրջանակներում իրացնում են սեփական շահերը, որի դիմաց վճարում է բնակչութիւնը: Եթէ Սամուէլ Կարապետեանի յայտարարութիւնը իրականութիւն դառնայ, ապա դա առնուազն նշանակում է ներհամակարգային նոր ստատուս-քուօ՝ դրանից բխող վերադասաւորումներով՝ քաղաքական ու տնտեսական:

Եւ վերջապէս այսօրուայ ամենաթարմ աղմկոտ տեղեկութիւնը ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան, նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանի նշանակումն է եւրասիական տնտեսական յանձնաժողովի կոլեզիայի նախագահի պաշտօնում: ԵՏՄ-ն Հայաստանի «վերին ատեանն է», եւ այնտեղ Տիգրան Սարգսեանի յայտնուելը

Աբրահամեանի ու Սամուէլ Կարապետեանի մուտքը հայկական քաղաքականութիւն միտուած է ապագայ իշխանութեան ձեւաւորման գործընթացին եւ նպատակ ունի չէզոքացնել ներքին ինչ ինչ գործընթացներ: Բացի այդ, Հայաստանում ստեղծուել է սոցիալ-տնտեսական աղէտալի իրավիճակ, եւ թէ Արա Աբրահամեանը, թէ Սամուէլ Կարապետեանը պատրաստակամութիւն են յայտնել զգալի դեր խաղալ Հայաստանի սոցիալական ինդիւստրիայի լուծման հարցում: Անկասկած, այս գործունէութիւնը կտրուած չէ քաղաքականութիւնից, եւ քանի որ ներկայիս տնտեսա-քաղաքական համակարգը լիովին սպառել է իրեն ու կանգնած է փլուզման եզրին, կարելի է արձանագրել, որ Հայաստանում կտրուկ փոխուում է ներքին իրավիճակը: Այն առումով, որ գործող համակարգն ապամոնոտաժուելու է, դրա աւերակների վրայ նորը կառուցելու նպատակով: Այսինքն, տեղի է ունենում համակարգի «վերարտադրութիւնը» նոր դերակատարներով, իսկ Սահմանադրութեան հանրաքուէն ընդամենը «լեզիտիմացնելու է» նոր ստատուս-քուօն:

Իսկ հանրութեանն ու «տեղական» քաղաքական ուժերին հերթական անգամ դուրս են թողնում ներքաղաքական զարգացումներից, մասնաւորապէս՝ իշխանութեան ձեւաւորման գործընթացից:

«ԼՐԱԳԻՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսալստիպագրի չի բաժնէր հոգն արտայայտուող բոլոր միտքերը

www.massisweekly.com
Updated every Friday

ՄԱՍԻՍ
ԾԱՌԱՅՈՒԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱՔԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՍՐԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ՄՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԸՆԿՐԱԾ ԱՆՆԵՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ոչ» ԵՒ «ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԻԵԼՆՈՅՆ Քաղաքական Ուժերից Կազմուած 2 Ծակատ

Հայաստանում սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէից առաջ «ոչ»-ի կողմնակիցները բաժանուած են ճամբարների եւ միասնական պայքար մղելու մասին խօսակցութիւնները դեռեւս գուտ ցանկութիւնների ոլորտից են: Այս պահի դրութեամբ «ոչ»-ի կողմնակիցների շրջանում ձեւաւորուել է երկու ճամբար՝ «Նոր Հայաստան» ու «Ոչ»-ի ճակատը»: «Ոչ»-ի երրորդ ճակատի մասին էլ յայտարարել նաեւ «Ազատամարտիկների Դաշինքի» անդամ Ռազմիկ Պետրոսեանը:

«Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատը ներկայացնող «Ժառանգութիւն» կուսակցութեան մամուլի խօսնակ Դաւիթ Սանասարեանը NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նշեց, որ ամէն ինչ անելու է, որ «Ոչ»-ի կողմնակիցները համատեղ պայքար մղեն: «Մենք փորձելու ենք ամէն ինչ անել, որ մէկ ընդհանուր ճակատ լինենք, մենք սովորաբար չենք պահուած եւք, իրար դէմ չենք պայքարում, փորձելու ենք միասնական ճակատով պայքարել եւ Սահմանադրական փոփոխութիւններին դէմն առնել: Մտածում ենք, որ կը ստացուի, կան տարբեր մտեցումներ, որոնք փորձում ենք հարթել», - ասաց Դաւիթ Սանասարեանը:

Սեպտեմբերի 12-ին ստեղծուած «Ոչ»-ի ճակատը պայքարում է Սահմանադրական փոփոխութիւնների դէմ: Այս ճակատին են միացել մի շարք հասարակական կազմակերպութիւններ, նախաձեռնութիւններ, ինչպէս նաեւ «Ժառանգութիւնը», ՀԱԿ-ը, «Հիմնադիր խորհրդարանը»: Դաւիթ Սանասարեանի խօսքով՝ իրենք ընդամէնը նախաստորագրել են «Ոչ»-ի ճակատում իրենց մասնակցութիւնը, ոչ թէ ստորագրել:

Թէեւ «Ժառանգութիւնը» յոյս ունի համոզել «Ոչ»-ի ճակատի միւս ուժերին, ՀԱԿ-ը կարծես թէ «Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատին միանալու ոչ մի ցանկութիւն չունի: Ինչպէս նշեց Աժ ՀԱԿ իմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեանը, իրենք միանալու են ժողովրդին: «Միանալու խնդիր չունենք: Ինչքան շատ ճակատ, ինչքան շատ

իմբեր, այնքան լաւ: Ամէն ինչ նորմալ է, որեւէ խնդիր չկայ: ՀԱԿ-ը ժողովրդին է միանալու, ինչքան շատ մարդ ընդդիմանայ Սահմանադրական փոփոխութիւններին, այնքան լաւ: Բոլորիս ուզածն է, որ տապալուեն Սահմանադրական փոփոխութիւնները: Իսկ այս պայքարի ձեւերն ինչքան բազմազան լինեն, այնքան լաւ: Իսկ «Ոչ»-ի ճակատի հետ համագործակցութիւնը շարունակելու ենք», - ասաց Արամ Մանուկեանը:

«Ոչ»-ի ճակատը նախաձեռնած՝ «Զէք Անցկացնի» նոյնպէս բացառում է հաւանականութեանը՝ փրկութեան ճակատին միանալու: Նշենք, որ «Նոր Հայաստանը» ձեւաւորուել է Հոկտեմբերի 12-ին. նրանք պահանջում են իշխանափոխութիւն:

«Ռազմավարական առումով որեւէ տարաձայնութիւն չունենք «Նոր Հայաստան»-ի հետ, գուտ մարտավարական տարբերութիւններ ունենք: Այս պահի դրութեամբ ինքս միանալու հաւանականութիւն չեմ տեսնում: Պատճառն այն է, որ մենք պատկերացնում ենք, որ Սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէն տապալելով իրականում Սերժ Սարգսեանի հեռացման գործընթաց կարող է սկսուել, բայց մենք կենտրոնացած ենք հանրաքուէն տապալելու վրայ, ոչ թէ իշխանափոխութեան վրայ», - ասաց «Զէք Անցկացնի»-ի անդամ Հրայր Մանուկեանը:

Նրա խօսքով՝ իրենք չեն դադարեցնում համագործակցութիւնը «Նոր Հայաստանի» անդամների հետ, աւելին համոզուած են՝ միմեանց օգնելու են, քանի որ Սահմանադրական փոփոխութիւնների դէմ պայքարող հանրութիւնը մի օր կարող է դառնալ իշխանափոխութիւն պահանջող հասարակութիւն:

Մինչդեռ քաղաքագէտ Արմէն Բաղալեանը համոզուած է, որ այս ճակատներից ոչ մէկն էլ լուրջ յաջողութիւններ չի գրանցելու, քանի որ անհրաժեշտ ռեսուրսը չունեն: Աւելին, քաղաքագէտը լիջեցրեց, որ այս ճակատներում ներգրաւուած ուժերից եւ ոչ մէկը՝ ՀԱԿ-ը, «Ժառանգութիւնը», «Հիմնադիր խորհրդարանը», իրենց նախկին պայքարներում յաջողութիւնների չեն հասել:

ՄԴ-Ը Պաշտպանեց Տեղեկատուութեան Աղբիւրը Չբացայայտելու ԶԼՍ-ների Իրաւունքը

Մօտ երկու ժամ խորհրդակցական սենեակում անցկացնելուց յետոյ Սահմանադրական դատարանը հրապարակեց որոշումը, ըստ որի լրագրողը իր տեղեկատուութեան աղբիւրը կարող է բացայայտել միայն ծանր յանցագործութիւնների եւ անձի պաշտպանութեան դէպքում:

«Իրաւունքի գերակայութեամբ առաջնորդուող ժողովրդավարական պետութիւնում իրաւունքների սահմանափակման համապատասխան սկզբունքներից ելնելով՝ տեղեկատուութեան աղբիւրի բացայայտման օրինական շահը գերակա կարող է ճանաչուել այն չբացայայտելու շահից այն դէպքերում, երբ աղբիւրի բացայայտումն անհրաժեշտ է անձի կենսաքի պաշտպանութեան, ծանր, առանձնապէս ծանր յանցագործութիւնը կանխելու կամ առանձնապէս ծանր յանցանքի մէջ մեղադրուող անձի դատական պաշտպանութիւնն ապահովելու համար», - որոշեց ՄԴ-ն: Բարձր դատարանը նաեւ որոշեց՝ վիճարկուող օրէնսդրական դրոյթները չեն հակասում սահմանադրութեանը, սակայն աւելի վաղ սխալ են կիրառուել: Մինչ այդ տեղեկատուութեան աղբիւրները բացայայտելու վերաբերեալ «Հրապարակ»-ի եւ «Իլուր»-ի նկատմամբ կայացուած վճիռները ենթակայ են վերանայման: Նիստից յետոյ դիմող, իրաւապաշտպան Արտակ Զէյնալեանն ասաց, թէ իրենց ամբողջութեամբ բաւարարել է վճիռը: Փաստաբաններ Արա Ղազարեանն ու Արտակ Զէյնալեանը Սահմանադրական դատարան էին դիմել, երբ ամիսներ առաջ առաջին ատենախի եւ վերաքննիչ դատարանները «Իլուր» կայքին եւ «Հրապարակ» օրաթերթին պարտադրել էին բացայայտել տեղեկատուութեան աղբիւրը եւ նշել՝ որտեղից է նրանց յայտնի, թէ Շիրակի այժմ արդէն նախկին ոստիկանապետ Վարդան Նազարեանը բռնութիւն է գործադրել յունահոռոմէական ոճի ըմբշմարտի աշխարհի չեմպիոն Արթուր Ալեքսանեանի ու նրա եղբօր նկատմամբ:

ԵՊՀ Ռեկտոր. «Դրսից Որեւէ Քարոզիչ Զի Մտնելու Համալսարան»

«Զէք Անցկացնի» նախաձեռնութիւնը քննադատում է Երեւանի պետական համալսարանում սահմանադրական փոփոխութիւնների հարցով կազմակերպուող միջոցառումները՝ պնդելով, թէ բուհի ղեկավարութիւնը «այդ»-ի քարոզչութիւն է իրականացնում:

Մայր բուհի ռեկտոր Արամ Սիմոնեանը պնդում է, որ օրերս կազմակերպուած միջոցառումը շարունակութիւն է ունենալու, եւ վստահութիւն է յայտնում, որ իրաւագիտութիւն ուսումնասիրող ուսանողները պետք է յստակ իմանան, թէ որոնք են առաջարկուող փոփոխութիւնների դրական ու բացասական կողմերը - «Եթէ կայ «ոչ»-ի քարոզ, բնականաբար, պետի երեւի լինի «այդ»-ի քարոզ: Համալսարանի մասնագէտների պարտքն է՝ իրազեկել կողմերի անդամներին եւ ուսանողութեանը, թե իսօքը ինչի մասին է, ինչու են ասում «ոչ» կամ ինչու են ասում «այդ»: Բա ո՞ւր մնաց

բազմակարծութիւնը, բա ո՞ւր մնաց առանց ճնշում գործադրելու մարդկանց կարծիք հարցնելը»:

«Այդ»-ի կողմնակից Արամ Սիմոնեանը կարծում է, որ սահմանադրական բարեփոխումների թեման պետք է քաղաքականացնել: Իսկ «Զէք Անցկացնի» նախաձեռնութեան անդամ Հրայր Մանուկեանը, հակադարձելով ռեկտորին, պնդում է՝ սա հենց քաղաքական նախագիծ է, որի նպատակը գործող իշխանութեան վերարտադրութիւնն է, եւ ուսանողների հետ կազմակերպուող միջոցառումների նպատակը նրանց նոյնպէս «այդ»-ի կողմնակից դարձնելն է. - ԵՊՀ-ում են ցանկանում կազմակերպել այդօրինակ քննարկում, սակայն Արամ Սիմոնեանը կտրուկ պատասխան տուեց՝ չի թողնելու, որպէսզի դրսից որեւէ մէկը գայ ու ԵՊՀ-ի ուսանողների շրջանում «ոչ» քարոզի. - «Դրսից որեւէ մի քարոզիչ չի մտնելու համալսարան, մենք դէմ ենք դրան»:

«Ժամանակ». Արա Աբրահամեանի Յայտնութիւնը ՀՀԿ-ականների Եւ Տագնապի Ե Մատնել

«Ժամանակ» թերթը գրում է. «Արա Աբրահամեանի ներդրումը Հայաստանի քաղաքական դաշտում ՀՀԿ շրջանակներում ընդունուել է ոչ միանշանակ: Իրավիճակը շատ պարզ է՝ Աբրահամեանն, ըստ էութեան, Պուտինի անունը շուրթերին գալիս է Հայաստանում կուսակցութիւն բացելու եւ յայտարարում է, որ իր հետ կատակ անել չի կարելի: Բնականաբար, ՀՀԿ շրջանակներում հարց է առաջանում՝ կատակո՞ւմ է Աբրահամեանը, թէ՞ իսկապէս գալիս է Պուտինի անունից: Հասկանալի է, որ Սերժ Սարգսեանից այս մասին յստակ տեղեկութիւն ՀՀԿ-ականները չեն կարող ստանալ, քանի որ Սարգսեանն ինքն էլ հազիւ թէ լիարժեք տեղեկատուութեան տիրապետի, իսկ տիրապետելու դէպքում՝ այդ մասին,

իհարկէ, չի կիսուի: Եւ բնականաբար, Աբրահամեանի յայտը ՀՀԿ-ում առաջացնում է անհանգստութիւններ, քանի որ նման կարգի, նման քաղաքական կատեգորիայի նմանօրինակ յայտից յետոյ առնուազն մտավախութիւն են առաջացնում, որ Աբրահամեանը պառլամենտում զգալի տեղ կը յաւակնի, եթէ իսկապէս գալիս է Պուտինի անունից: Եթէ ոչ, ապա ՀՀԿ-ականները կը սպասեն, թէ երբ են մի գեղեցիկ յետոյ նրա հետ անելու այն, ինչ Ծառուկեանի հետ արեցին: Սակայն արի ու տես, որ չկան յստակ երաշխիքներ՝ Պուտինն Աբրահամեանի թիկունքին է, թէ ոչ: Եւ, բնականաբար, առաջանում է տագնապ, որն էլ ծնում է ոչ միանշանակ ընկալումներ»:

ՀՀԿ-ի Քարոզչական Շտաբը Կը Ղեկավարի Վարչապետ Յովիկ Աբրահամեանը

Սահմանադրական բարեփոխումների շուրջ ՀՀԿ քարոզչական շտաբը կը գլխաւորի Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեանը: ՀՀԿ ԳՄ նիստից յետոյ այս մասին լրագրողներին յայտարարեց կուսակցութեան խօսնակ, Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը: Կուսակցութեան նախագահ Սերժ Սարգսեանը Յովիկ Աբրահամեանին յանձնարարել է հանրապետութիւնում շտաբեր ձեւաւորել եւ ղեկավարել դրանք՝ Դեկտեմբերի 6-ի հանրաքուէի համար: Արդէն առաջիկայ օրերին վարչապետը գործընկերների հետ կը ձեւաւորի դրանք: Շարմազանովի խօսքով, դրա համար վարչապետը ստիպուած չի լինի արձակուրդ գնալ, քանի որ հանրաքուէների մասին Հայաստա-

նի օրէնսդրութիւնը թոյլ է տալիս համատեղել կառավարութեան ղեկավարի եւ հանրաքուէի նախապատրաստման կազմակերպչի պարտականութիւնները: Հարցին, արշաւին ի՞նչ մասնակցութիւն կ'ունենայ նախագահը, Էդուարդ Շարմազանովը պատասխանեց. «Արշաւն անցկացնելու է վարչապետը: Մեզ համար կարեւոր է, որպէսզի ամբողջ հասարակութիւնը կողմ լինի սահմանադրական բարեփոխումներին, բայց կարեւոր է նաեւ, որպէսզի գործընթացը համապատասխանի օրէնքի տալիս եւ ոգուն»:

Յիշեցնենք, որ Հայաստանի սահմանադրական բարեփոխումների նախագիծի հիմնական դրոյթը կառավարման կիսանախագահական համակարգի խորհրդարանական համակարգին անցումն է:



Թաւուքօղլուն եւ Մերկելը քննարկել են Հայոց Ցեղասպանութեան Թեման

Թուրքիայի վարչապետ Ահմեդ Նավուշթօղլուն նախօրէին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ հանդիպման ժամանակ անդրադարձել է նաեւ Հայոց ցեղասպանութեան թեմային:

Թուրք վարչապետն, անդրադառնալով Բունդեսթագում քննարկման դրուած ցեղասպանութեան մասին բանաձեւի նախագծին, նորից խօսել է պատմաբանների յանձնաժողով ստեղծելու անհրաժեշտութեան մասին, տեղեկացնում է Գերմանիայի կառավարութեան պաշտօնական կայքը:

«Մենք անդրադարձել ենք նաեւ 1915թ. վերաբերող թեմաներին եւ այն նախագծին, որն այդ կապակցութեամբ դրուել է Բունդեսթագի քննարկմանը: Ես նշել եմ, որ այդ թեմաներն իրականում պետք է քննարկուեն ակադեմիական մակարդակով՝ յատուկ յանձնաժողովում, որի կազմում պետք է լինեն նաեւ գերմանացի պատմաբաններ: Ես ուզում եմ եւս մէկ անգամ ներկայացնել թուրքական կողմի դիրքորոշումը. Գերմանիան եւ թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմում նոյն կողմում էին կուռն, եւ



Անգելա Մերկել եւ Դաւուքօղլուն Պերլինի մէջ տեղի ունեցած հանդիպման ժամանակ

այս հարցում նրանք պէտք է պատմաբանների յանձնաժողովի կազմում այլ գիտնականների հետ ներկայացուած լինեն, որպէսզի քննարկեն այդ հարցը: Մենք պատրաստ ենք այդ հարցում ցանկացած օգնութիւն ցուցաբերել: Մենք ուզում ենք հայերի հետ պատմական հաշտեցման համար եւ պատրաստ ենք ցանկացած համագործակցութեան», - ասել է Դաւուքօղլուն:

Անգելա Մերկելն իր հերթին շնորհակալութիւն է ցայտնել հայ թուրքական հաշտեցման հարցում Դաւուքօղլուի առաջարկի համար եւ նշել, որ, իր կարծիքով, իրենք կարող են շարունակել ակտիւօրէն աշխատել միասին:

«Deutsche Welle»-ն Հայոց Ցեղասպանութեան Մասին Գերմանիան Չի Ցանկանում Բարկացնել Երդողանին

Գերմանիայի խորհրդարանը չի շտապում հայերի ջարդերը ցեղասպանութիւն կոչել: Միթէ ամբողջ հարցն այն է, որ չեն ցանկանում բարկացնել թուրքիայի նախագահ Ռեջէօ թաւրիպի էրդողանին: Ինքն իրեն նման հարց է տալիս գերմանական «Deutsche Welle»-ի յօդուածի հեղինակը:

Նրա խօսքով, Բունդեսթագում Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ որոշման քննարկումը յետաձգելով՝ Գերմանիայի կառավարութիւնը փորձում է շղոքորթել թուրքիային:

«Der Spiegel»-ի հրատարակուածներին համաձայն, իշխող ԲԴԴՖՍՍ կուսակցութիւնների դաշինքը եւ Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը համաձայնութեան են եկել՝ անորոշ ժամանակով յետաձգել Հայոց ցեղասպանութեան վերաբերող որոշման նախագծի վերջնական ընթերցումը: Սակայն «Deutsche Welle»-ն գրում է, որ որոշ ազդիւրների պնդմամբ, յետաձգումը տեղի է ունեցել հենց ԲԴՄ-ի ջանքերով:

Միաժամանակ ընդդիմադիր Կանաչների կուսակցութիւնը պնդում է, որ խորհրդարանը մինչեւ տարեվերջ պիտի ընդունի Հայոց ցեղասպանութիւնը: «Դաշինքը տեղում դուրս է եկել, բայց ժամերը գնում են, տարեկիցն արագ աւարտին է մօտենում», - ասում է Կանաչների առաջնորդ Ջեմ ֕զգե-

միրը: Ինչպէս նշուած է յօդուածում, ոչինչ այնպէս չի ջղայնացնում թուրքիայի նախագահ Ռեջէօ թաւրիպի էրդողանին, որքան 1915-ի դէպքերի համատեքստում «ցեղասպանութիւն» եզրույթի գործածութիւնը:

Հեղինակի կարծիքով, մի բան պարզ է. այս պահին Գերմանիայի կառավարութիւնը թուրքիայի կարիքն ունի փախստականների խնդրի լուծման համար: Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը ցանկանում է, որ նախագահ էրդողանն աւելի սերտօրէն համագործակցի ԵՄ-ի հետ: Կանցլերը կիրակի օրը թուրքիա կը մեկնի այդ հարցերը քննարկելու:

«Մերկելի այցի ազդարարումը Բեռլինում խառը արձագանքներ է առաջ բերել: Թուրքիայում ընտրութիւնները նախատեսուած են Նոյեմբերի 1-ին: Այս գարնանը էրդողանի պաշտպանողական իսլամիստական կուսակցութիւնը չի կարողացել ձայների բացարձակ մեծամասնութիւն ստանալ եւ այժմ փորձում է վերականգնել իր դիրքերը:

Գերմանիայի ընդդիմադիր Կանաչների եւ ձախական կուսակցութիւնները մտահոգութիւն ունեն, թէ Մերկելի ուղեւորութիւնը կարող է անպասելիօրէն վերածուել նախագահի ընտրական քարոզարշաւի աջակցութեան», - ամփոփում է հեղինակը:

ՄԴՀԿ Կը Ցատակացնէ Իր Դիրքորոշումը

Ճարուհակուած էջ 1-էն

Պետրոսեանի կողմնակից է: Հնչակեան կուսակցութեան համար խորհրդարանական կառավարման

համակարգի անցումը նաեւ իշխանափոխութեան հնարաւորութիւն է տալիս: Եթէ փորձենք աւելի ազնիւ գտնուել՝ արդեօք

Տիգրան Սարգսեան Կը Նշանակուի ԵՏՄ Տնտեսական Ցանձնաժողովի Նախագահ

2016 թուականի Փետրուարի 1-ից Եւրասիական տնտեսական համագործակցութեան նախագահութիւնը անցնելու է Հայաստանին, իսկ ԵՏՄ-ի գործադիր մարմնի ղեկավար է նշանակուելու Հայաստանի նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանը, ով այժմ Հայաստանի դեսպանն է ԱՄՆ-ում:

Այս մասին յայտարարուել է Ղազարստանում կայացած ԵՏՄ-ի գագաթաժողովում՝ անդամ հինգ երկրների ղեկավարների նիստին:

«Մենք որոշում ընդունեցինք, թէ Փետրուարի 1-ից՝ Ռուսաստանից յետոյ, ով է լինելու, Վիկտոր Խրիստենկոյից յետոյ ով է գլխաւորելու մեր յանձնաժողովը», - «Ինտերֆաքս»-ի փոխանցմամբ ասել է Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն եւ դիմել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին, - «ասացէք ինդրեմ Հայաստանի ներկայացուցչի անուն-ազգանունը»:

«Սարգսեան Տիգրան Սուրենովիչ, Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետը», - պատասխանել է Սերժ Սարգսեանը:

Լուկաշենկոն ընդգծել է, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հաւանութիւն է տուել Տիգրան Սարգսեանի թեկնածութեանը:

«Նրա թեկնածութիւնը պաշտպանել է Ռուսաստանի նախագահը, ով նրա հետ աշխատել է: Ասում են շատ փորձառու, զարգացած մաս-



Հայաստանի նախկին վարչապետ Տիգրան Սարգսեան

նագետ է», - նշել է Բելառուսի նախագահը:

Ներկայ պահին Եւրասիական տնտեսական յանձնաժողովի կոլեգիայի ղեկավարը Ռուսաստանի ներկայացուցչի Վիկտոր Խրիստենկոն է, իսկ ԵՏՄ-ում այժմ նախագահում է Բելառուսը:

Եւրասիական տնտեսական յանձնաժողովի յաջորդ գագաթաժողովը կ'անցկացուի Դեկտեմբերին՝ Մոսկուայում: Պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել, որ մինչ այդ կը ձեւաւորուի 10 անդամների կազմուած յանձնաժողովը՝ իւրաքանչիւր երկրից երկու անդամ կը նշանակուի: Ըստ Լուսթեան այդ յանձնաժողովի անդամը ԵՏՄ նախարարի կարգավիճակի նման պաշտօն է:

Եւրասիական Ինտեգրման Հանդէպ Հայաստանի Բնակչութեան Հետաքրքրութիւնը Նուազել է

Եւրասիական Տնտեսական Միութեան անդամ պետութիւններին քաղաքացիների շրջանում գերակշռում է եւրասիական տնտեսական ինտեգրման հանդէպ դրական վերաբերմունքը: Միաժամանակ, Հայաստանի եւ Բելառուսի բնակչութեան հետաքրքրութիւնն այդ առումով վերջին տարուայ ընթացքում նուազել է: Այսպիսին են Եւրասիական Ջարգացման Բանկի (ԵԶԲ) ինտեգրացիոն հետազօտութիւնների կենտրոնի ամենամեայ հետազօտութեան արդիւնքները:

Հետազօտութեան համաձայն, ԵՏՄ-ին անդամակցութեանը սատարողների մակարդակը Ռուսաստանի եւ Ղազարստանի բնակիչներին շրջանում կազմում է, համապատասխանաբար, 78% եւ 80%: Մինչդեռ Հայաստանի եւ Բելառուսի քաղաքացիներն աւելի ցածր են գնահատում ԵՏՄ-ին անդամակցութիւնը (56% եւ 60% համապատասխանաբար, ինչը 8%-ով ցածր է 2014 թուականի ցուցանիշներից): Հայաստանում նաեւ աւելանում է նրանց թիւը, ովքեր ան-

տարբեր են կամ բացասաբար են վերաբերում ԵՏՄ-ին անդամակցութեանը:

2015 թուականի հարցման ընթացքում Հայաստանի, Բելառուսի, Ղազարստանի եւ Ռուսաստանի բնակչութեանը հարցրել են ԵՏՄ որոշ ընդհանուր ինստիտուտների ստեղծման շուրջ վերաբերմունքի մասին, միասնական արժոյթ, ընդհանուր օրէնսդրութիւն, ընդհանուր բանակ եւ կառավարման միասնական օրգան:

«Վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ ԵՏՄ անդամ ըլլող 4 պետութիւններում այս հարցերի շուրջ միասնական դիրքորոշում չկայ: Որպէս բացառութիւն կարելի է նշել Հայաստանը, որտեղ քաղաքացիների 55%-ը դէմ է միասնական արժոյթին: Ընդհանուր բանակի մասով բացառութիւն են նաեւ Բելառուսն ու Ռուսաստանը, որտեղ քաղաքացիների մեծ մասը՝ 57% եւ 53% համապատասխանաբար, դէմ են դրան», - կենտրոնում ասել են ԲԵԼՏԱ-ին:

«ոչ»-ի կողմնակիցները, ովքեր չեն հիմնաւորում «ոչ»-ի գաղափարական մասը, որովհետեւ միայն այս իշխանութիւններն են առաջ քաշել, կարողանալու են այս երկում իշխանափոխութիւն իրականացնել, եթէ մնայ այս Սահմանադրութիւնը», աւելցուց Նարեկ Գալստեան:

Անկախ ամէն բանէ, ՄԴՀԿ ատենապետը շեշտեց, որ հասարակութեան մէջ կայ մեծ դժգոհու-

թիւն իշխանութեան որեւէ դրսեւորման հետ կապուած ու համակարգային փոփոխութիւններ անհրաժեշտ են :

ՄԴՀԿ Հայաստանի 10-րդ Համագումարի հրապարակային բացումը կատարուեցաւ Շաքաթ, Հոկտեմբեր 17-ին, Երեւանի «Անի Փլազա» հիւրանոցէն ներս, որմէ ետք նիստերը շարունակուեցան դռնփակ:

ԹՈՒՐՔ ԳՐՈՂԸ Կ'ԵՐԱԶԷ ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ ՏԵՍՆԵԼ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՁՈՐՑԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԾ ՅՈՒՇԱԿՈՒԹՈՂ «ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻՆ ԿՐԱՅ ԶԱՐԵՆՑՆ ՈՒ ԹՈՒՄԱՆԵԱՆՆ ԵՆ, ԹՐԲԱԿԱՆԻՆ ԿՐԱՅ՝ ԱԹԱԹՈՒՐՔԸ»

Հայկական հարցին մասին բազմաթիվ գիրքեր հրատարակված թուրք գրող Քեմալ Եալչըն, որ առաջին անգամ ըլլալով Հայաստան կ'այցելի, կը հաւատայ, որ պիտի գայ օրը, երբ Անգարայի մէջ նոյնպէս պիտի կառուցուի Հայոց Յեղասպանութեան գոհերուն յիշատակը յաւերժացնող յուշակոթող:

Լրագրողներուն հետ ունեցած գրոյցին ընթացքին Ք. Եալչըն նշած է, որ թուրքերուն կողմէ հայերուն նկատմամբ կատարուած Յեղասպանութիւնը հիմա եւս կը շարունակուի, քանի որ դեռ թուրքիան չէ ընդունած իր յանցանքը:

«Հիմա եկայ Ծիծեռնակաբերդէն, շատ յուզուած եմ, յստակօրէն կը գիտակցիմ, որ հայերուն ցաւը նաեւ իմ ցաւս է: Հայոց Յեղասպանութեան մասին քանի մը գիրք գրած եմ, բայց գիտեմ, որ ատրիկա ոչինչ է այն ցաւին դէմ, ինչ որ դուք կը զգաք:

Թուրքիան պէտք է առերեսուի իր պատմութեան հետ, ճանչնայ Յեղասպանութիւնը, հակառակ պարագային տարածաշրջանին մէջ խաղաղութիւն չի կրնար ըլլալ», - ըսած է Քեմալ Եալչըն:

Ըստ անոր՝ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին թուրքիան աշխարհի մէջ միակ մնացած է՝ կրկնելով 1915-էն ետք թուրքիոյ իշխանութիւններուն կողմէ միշտ հնչեցուած նոյն «երգը»՝ «Օսմանեան կայսրութիւնը հայերուն հանդէպ ցեղասպանութիւն չէ կատարած»:

«Երբ էրտողան նոր եկաւ իշխանութեան գլուխ, խոստացաւ, որ ամէն ինչ պիտի ընէ, որպէսզի Հայկական հարցը դրական ըն-



թացք ունենայ, սակայն ան ալ խաբէբայ դուրս եկաւ: Հրանդ Տինքին շնորհիւ 1990-էն սկսեալ թուրքիոյ մէջ մտաւորականները սկսան բարձրաձայնել Հայոց Յեղասպանութեան մասին, բան մը, որ մինչ այդ թուրքիոյ մէջ չտեսնուած երեւոյթ էր, սակայն մտաւորականները կը հալածուէին, ինչպէս որ եղաւ Հրանդ Տինքի պարագային: Սակայն կրնամ ըսել, որ վերջին տարիներուն այս առումով թուրքիոյ մէջ բաւական դրական փոփոխութիւններ կը նկատուին, մտաւորականները, արուեստի ներկայացուցիչները կրնան բացէ ի բաց ներկայացնել իրենց կարծիքը Հայոց Յեղասպանութեան մասին», - ըսած է Քեմալ Եալչըն:

Թուրք գրողը այն կարծիքին է, որ Հայկական հարցի լուծման համար թուրքիա պէտք է Հայաստանին տարածքային, նիւթական եւ մշակութային փոխհատուցում

տայ. ըստ անոր՝ միայն այդ ձևով կարելի է երկու երկիրներուն միջեւ վերականգնել բարեկամութիւնն ու խաղաղութիւնը: «Եղբայրութեան ձգտող ժողովուրդին համար խաղաղութիւնը ամէն ինչէ կարելոր է, ես կը կարծեմ, թէ Հայկական հարցին պէտք է տալ այնպիսի լուծում, ինչպէս որ կ'ուզեն հայերը»:

Ան նաեւ անդրադարձած է թուրքիոյ եւ Ատրպէյճանի յարաբերութիւններուն՝ դիտել տալով, որ թուրքիան ամէն ինչ կ'ընէ, որպէսզի Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ պատերազմ սկսի: Եալչըն հաստատած է, որ պիտի գայ օրը, երբ արդարութիւնը պիտի վերականգնի եւ տարածաշրջանին մէջ խաղաղութիւն պիտի տիրէ:

«Իբրեւ մտաւորական կը փափաքիմ, որ ատրպէյճանցիներուն եւ հայերուն միջեւ խաղաղութիւն ըլլայ: Թուրքիան մնայուն կերպով պատերազմ կը հրահրէ, Ատրպէյճանին կը վաճառէ զէնք, որով իրենք ե՛լ հայեր, եւ թուրքեր կը սպաննեն: Կը դատապարտեմ թուրքիոյ իշխանութիւններու նման գործելաճը. կարելի չէ տարածաշրջանին մէջ պատերազմ հրահրել», - ըսած է Քեմալ Եալչըն:

Թուրք գրողը նշած է, թէ ինք տեղեակ է, որ Հայաստան գալիս ետք կրնայ Ատրպէյճան երթալու առումով հարցեր ունենալ, սակայն կը կարծէ, թէ Ատրպէյճան մարդոց դէմ նման արգելքներ դնելով ոչ մէկ տեղ կը հասնի:

«Երբեք Ատրպէյճան չեմ այ-

ցելած եւ գիտեմ, որ կրնայ ըլլալ հարցեր ունենամ Ատրպէյճան երթալու առեւ, սակայն մէկ բան յստակ գիտեմ, որ Ատրպէյճան մարդոց դիմաց արգելքներ դնելով, «Սեւ ցանկ»ին մէջ արձանագրելով զանոնք ոչինչ կրնայ կառուցել եւ ոչինչի կրնայ հասնիլ», յայտնած է Եալչըն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԻՆ ՎՐԱՅ ՁԱՐԵՆՑՆ ՈՒ ԹՈՒՄԱՆԵԱՆՆ ԵՆ, ԹՐԲԱԿԱՆԻՆ ՎՐԱՅ՝ ԱԹԱԹՈՒՐՔԸ»

Երեւանը մշակույթի եւ արուեստի քաղաք է, ինչ որ կը փաստէ, թէ այս ազգը բարձրարժէք մշակույթ ստեղծած ժողովուրդ է: 14 Հոկտեմբերին լրագրողներուն հետ ունեցած գրոյցին ընթացքին այս հաստատումը կատարեց Քեմալ Եալչըն՝ նշելով, որ հիացած ու զարմացած է Երեւանի գեղեցկութեամբ, յուշարձաններու բազմազանութեամբ, փողոցներու եւ թաղամասերու անուանումներով:

«Հայաստան գալիս ետք առաւել եւս սկսայ հայերը սիրել: Պէտք է ԵՈՒՆԵՍԿՕ-ին դիմել, որպէսզի Երեւանը մշակույթի եւ արուեստի քաղաք հռչակուի: Յնցուած եմ Երեւանի մէջ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ Հայկական շրջաններու անունները կրող թաղերը տեսնելով, Օղակաձեւ այգիին հետիոտն քաղցի մինչեւ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, եւ ամէն քառակուսի մեթրի վրայ արուեստի գործիչներու եւ այլ բնագաւառներու յայտնի մարդոց արձանները տեսայ: Այսպիսի բանի, ըստ բնակչութեան քանակին, աշխարհի շատ քիչ քաղաքներու մէջ կարելի է հանդիպիլ: Չիս շատ զարմացուց նաեւ մեթրոյի անուանումը՝ «Բարեկամութիւն», որովհետեւ այդպիսի անուանումներ շատ բան կ'ըսեն տուեալ ազգին մասին: Երեւանի մէջ բոլոր փողոցներուն, դպրոցներուն անունները մշակույթի գործիչներու անուններով են, նման բան չկայ թուրքիոյ մէջ», յայտնած է 25-է աւելի գիրքերու հեղինակ Քեմալ Եալչըն, նշելով՝ որ թրքական թղթադրամին վրայ պատկերուած է Աթաթուրքին պատկերը, իսկ հայկական դրամին վրայ՝ Զարենցի, թումանեանի»:

ԼԻԲԱՆԱՆ ԶԱՅՈՑԱՆԻ ԿՈՂՔԻՆ Է



Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեան ժընեւի մէջ տեսակցեցաւ իր լիբանանցի պաշտօնակից Նեպիհ Պըրրիի հետ: Սահակեան եւ Պըրրի փոխանակեցին այցելութիւններու հրաւերներ: Անոնք նաեւ քննարկեցին երկկողմանի բարեկամական յարաբերութիւնները զարգացնելու միջոցները, ինչպէս նաեւ Սուրիոյ զարգացումները եւ շրջանային վտանգաւոր իրադարձութիւնները: Պըրրի դիտել տուաւ, որ Հայաստան մաս կը կազմէ Լիբանանին, իսկ Լիբանան՝ Հայաստանին: Ան նաեւ դրուատեց լիբանանահայերու դերակատարութիւնը խորհրդարանին ու կառավարութեան մէջ: «Լիբանան Հայաստանի կողքին է եւ Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդրի հարցին մէջ կ'աջակցի Հայաստանի Հանրապետութեան», ըսաւ Պըրրի:

Հայաստանի Ազգային ժողովի նախագահը նաեւ տեսակցեցաւ Ռուսիոյ Դաշնային Խորհուրդի նախագահ Վալենթինա Մատվիէնքոյի հետ: Ռուս պատասխանատուն նշեց, որ տնտեսական զարգացումի լաւագոյն միջոցը պետութիւններու միասնական միութիւններու ստեղծումն է:

Միջխորհրդարանական միութեան 133-րդ վեհաժողովի աշխատանքներուն ծիրին մէջ կայացած տեսակցութեան ընթացքին, Սահակեան նշեց, որ երկու երկիրներուն միջեւ դաշնակցային ռազմավարական համագործակցութեան հիմքը կը կազմէ ոչ միայն արդի փոխադարձ համագործակցութիւնը, այլևս երկու երկիրներու եղբայրական ժողովուրդներու դարաւոր բարեկամութիւնը, մշակութային եւ հոգեւոր մտերմութիւնը:

Յայկական Կողմի Փաստաբանները

Շարունակուած էջ 1-էն

տրուած հարցազրոյցի ընթացքին ըսած է Քլունի: Փաստաբանի կարծիքով՝ թրքական ժխտողականութիւնը անհեռանկարային է, կը դանդաղեցնէ այդ երկրի հանրութեան առողջացումը եւ կը բարդացնէ հաշտութիւնը: «Ինձի համար մեծ պատիւ էր ներկայացնել Հայաստանը այս գործին մէջ: Համոզուած եմ՝ հայերուն ընդհանրապէս չէր մտահոգեր Փերինչէքի կատարած արտայայտութիւնները: Հայերուն շատ աւելի սրտամօտ է Հոլոքի Պայլի խօսքերը, ուր յստակօրէն ըսուած է Հայոց ցեղասպանութեան մասին»:

Փաստաբանի համաձայն, ինք եւ ձեֆրի Ռոպրոլոսն այս գործին մէջ ներգրաւուած են այն պատճառով, որ գիրքնք մտահոգած էր

Միե՛ր-ի Ստորին Պալատի վճիռին մէջ յայտնուած գնահատականները, որոնցմով վիճալարոյց կը դարձնէր այն փաստը, թէ արդեօք 1915 թուականի կոտորածները կը որակուին որպէս ցեղասպանութիւն: «Նման ձեւակերպումները, իհարկէ, վիրաւորական էին հայութեան համար... Մեր համոզմամբ՝ Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանի Մեծ Պալատը պէտք է սկզբունքային գտնուէր եւ առնուազն բացառէր նման արտայայտութիւնները: Այս վճիռով մենք յաղթեցինք: Դատարանը որոշեց, որ Ստորին Պալատի ձեւակերպումները անտեղի էին»:

«Հայոց ցեղասպանութիւնը պատմական անառարկելի իրողութիւն է: Մենք զգացուած ենք դատարանի նման դիրքորոշումով: Ահա՛ թէ ինչու այս վճիռը յաղթանակ է հայութեան համար», - ըսած է Քլունի:

Հարցազրույց՝ ՍԴՀԿ Լիբանանի Վարիչ Մարմինի Ատենապետ Ընկ. Ալեքսան Բեռլանի Դետ «ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ ԿԻՉԱԿԵՏԱՅԻՆ ԿԸ ՄԱԱՅ ԴԵՊԻ ԹՈՒՐՔԻԱ ԾԱՆԱՊԱՐՅՆԵՐ ԲԱՆԱԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ».
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԱՅԱՍՏԱՆ»ԻՆ ԸՍԱԲ ԸՆԿ. ԱԼԵՔՍԱՆ ԲԵՐԼԱՆԻ

Հարցազրույցը՝ ՍՄԳՕ ԱՐԵԱՆԻ

- Անկիւնադարձային դէպքեր կը կատարուին Թուրքիոյ մէջ:

Անցեալ Յուլիս ամսունէ սկսեալ Թուրքիան մտած է նոր հանգրուան մը, որ կը մատնէ այն մասին, թէ երկիրը քաղաքական սուր ճգնաժամ մը կ'ապրի: Ինչպէ՞ս կը մեկնաբանէք այսօր Թուրքիոյ մէջ արձանագրուող զարգացումները:

- Կը կարծեմ, թէ Թուրքիոյ մէջ սկիզբ առած զինուորական գործողութիւնները կրնան անսպասելի աճ արձանագրել: Վերջին օրերուն, ինչպէս գիտէք, Թրքական ուժերը ծանր պաշարման տակ առած էին երկրի հարաւ-արեւելեան հատածին մէջ գտնուող «Ճիզըրէ» գաւառը: ՔԱԿ-ի (PKK) դէմ եղած զինուորական գործողութիւններէն բացի յարձակումներ եղան նաեւ HDP՝ քրտամէտ կուսակցութեան կենդրոնատեղիներուն վրայ: Երկրի տարբեր շրջաններուն մէջ քիւրտ քաղաքացիներ ծեծի կ'ենթարկուին, կը հալածուին եւ բանտերը կը նստուին: Լրջօրէն մտահոգ եմ, որ այս դէպքերը կը տարածուին Թուրքիոյ տարբեր շրջաններուն մէջ, որովհետեւ էրտողան մտադիր է ամէն գնով ծանր հարուած տալ քիւրտերուն:

Չէ բացառուած, որ այս բոլոր գործողութիւնները նախատարատարուած ըլլան, որովհետեւ անցնող 7 Յունիսի ընտրութիւններէն ետք, երբ HDP (Ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութիւն) յաջողեցաւ 10%-ի շէմը անցնել, այս բոլորը արդէն կանխատեսելի էին: Եթէ երկրին մէջ իրավիճակը այս հունով շարունակուի, չեմ բացառեր, որ յառաջիկայ 1 Նոյեմբերին նախատեսուած ընտրութիւնները ընդհանրապէս չեղեալ յայտարարուին: Տեղին կը համարեմ նշել, որ այն քիւրտերը, որոնք իշխող AKP կուսակցութեան քուէ տուին, կրնան այս դէպքերուն հետեւանքով փոխել իրենց կարծիքը եւ քուէարկել HDP կուսակցութեան: Այս վիճակներուն մէջ նախատեսելի է նաեւ, որ ծայրայեղական թուրքեր իրենց քուէն տան էրտողանի կուսակցութեան: Սակայն այս բոլորին հանդերձ, էրտողան պիտի չչաղթէ:

Շատ հաւանական է, որ յառաջիկայ ընտրութիւններուն յաղթող կուսակցութիւնը ըլլայ Թուրք ազգայնական թեքում ունեցող MHP կուսակցութիւնը: Այսօր բոլորս գիտենք, որ HDP կուսակցութեան կեդրոնատեղիներուն վրայ եղած յարձակումները կը կատարուին «Գորշ գայլերու» կողմէն: Այս «Վոհմակները» նոյնպէս փորձանք պիտի ըլլան էրտողանի գլխուն: Պէտք է նաեւ մտնել, որ այս դէպքերը պիտի ունենան կարեւոր ազդեցութիւն եւ անոնց արդիւնքները երեւելի կը դառնան թէ այսօր եւ թէ գալիք ապագային:

- Ի՞նչ կրնայ պատահիլ Թուրքիոյ մէջ, եթէ MHP կուսակցութեան ցնամ ծայրայեղական կուսակցութիւն մը իշխանութեան գլուխ գայ, արդե՞ք պոլսահայութիւնը վտանգուած կ'ըլլայ:

- Չեմ կարծեր, որ Թրքական ազգայնամոլ որեւէ կուսակցութիւն, յատկապէս՝ MHP-ն կրնայ իշխանութեան հասնել, անոնց ունեցած քուէները մօտ են HDP կուսակցութեան ունեցած քուէներուն: Ատկէ բացի, նման ծայրայեղական կուսակցութիւններ, իմ կարծիքով, յառաջիկայ տարիներուն ոչ մէկ դեր պիտի ունենան Թուրքիոյ մէջ: Այսօր նոյնն է Եւրոպայի մէջ, ուր ցեղապաշտ կուսակցութիւնները որեւէ դեր չունին: Վերադառնալով էրտողանին եւ անոր ղեկավարած AKP կուսակցութեան, որ անցնող 10-12 տարիներուն յաջողեցաւ տնտեսական ֆոնի վրայ որոշ «յաջողութիւններ» արձանագրել, բայց եւ այնպէս վերջին դէպքերուն լոյսին տակ պէտք է արձանագրել, որ Թուրքիոյ մէջ սկիզբ առած է հանգրուան մը, որ կը յատկանշուի էրտողանի անկումի սկիզբով: Էրտողան եթէ այս պէս շարունակէ,



ողբերգական աւարտ մը կրնայ ունենալ: Կրնայ ըլլալ նաեւ, որ էրտողանի կուսակցութիւնը յառաջիկայ ընտրութիւններուն յաջողի մեծամասնութիւն ապահովել խորհրդարանէն ներս, սակայն այդ չի նշանակեր, որ առկայ քաղաքական տագնապը կը վերջանայ: Բացի այդ, շատ հաւանական է, որ HDP խորհրդարանէն ներս իր ներկայ 13 առ հարիւր ներկայութիւնը քանի մը կէտով բարելաւէ: Ուրեմն, այս ընդհանուր պատկերին տակ բնական է, որ քաղաքական ճգնաժամը շարունակուի եւ իշխող կուսակցութիւնը չկարենայ նոր կառավարութիւն մը կազմել: Չէ բացառուած նաեւ, որ ընտրութիւնները ապահովական պատրուակներով ընդհանրապէս չեստաձգուին: Չմոռնանք, որ Արեւելեան շրջաններուն մէջ տեղի կ'ունենան զինուորական բախումներ եւ այդ մէկը կը հեռացնէ ընտրութիւն կայացնելու ընտրանքը:

- Հայութեան եւ Հայաստանի համար, ո՞ր քաղաքական ուժը ակնկալուի որ արագափոխուի:

- Բնականաբար հայութեան համար երբեք ձեռնառու չէ, որ Թուրք ծայրայեղականներ իշխանութեան գլուխ գան ու չի բացառուիր, որ այդ ուժերը իշխանութեան գլուխ հասնելով, հայութիւնը կրնայ խորապէս վտանգուել, ե՛ւ ներքին իմաստով եւ թէ ալ Արցախեան ճակատը կրնայ բռնկուիլ: Այս տեղ կ'ուզեմ նշել, որ Թուրքիոյ մէջ տիրող այսօրուան դրութիւնը կը նմանի 1980-ականներու իրավիճակին եւ շատ հնարաւոր է, որ երկրին մէջ անակնկալ

յեղաշրջում մը տեղի ունենայ: Բնականաբար այդ տեղի ունենալիք յեղաշրջումը պիտի կատարուի Թուրքիոյ բանակի բարձրաստիճան սպաներուն կողմէ: Հակառակ վերջին տարիներուն էրտողանի կողմէ բանակը ճնշելու փորձին, այդ կառուցը կը շարունակէ մնալ ցեղապաշտական կառուց, որ յաճախ կը փորձէ օրակարգ թելադրել: Ճիշդ է, որ բանակը կուսակցական կառուց մը չէ, բայց փոխաբերական իմաստով ան կը փորձէ, որպէս կազմակերպուած կառուց ներկայանալ:

Այս բոլոր տուեալները նկատի առնելով կարելի է ըսել, որ Թուրքիոյ մէջ չի բացառուիր զինուորական յեղաշրջում կատարուելու վարկածը:

- Այս ընդհանուր մթնոլորտին մէջ հաւանական կը նկատուի, որ Թուրքիա տարբեր խողովակներով ճնշումներ բանցնել սփիւռքահայութեան դէմ:

- Ընթացիկ 2015 տարուան ընթացքին մենք երեւելի կերպով զգացինք Թրքական հակահայ քարոզչական մեքենային բացայայտ աշխուժացումը ու զաղանիք չէ, որ ծայրայեղականներու իշխանութեան գլուխ գալէն յետոյ նոյն հակահայ քարոզչական մեքենան կրնայ փոխուել այլ բանի, անոնք կրնան տարբեր ձեւի ճնշումներ իրականացնել, կրնայ ըլլալ նաեւ, որ տարբեր հայկական գաղութներու մէջ իրենց ենթակալ «արբանեակներով» անոնք հակահայ տրամադրութիւններ հրահրեն: Ի վերջոյ չմոռնանք, որ Թուրքիան ցեղապաշտ հիմքեր ունեցող պետութիւն մըն է:

- Իսկ Սփիւռքը պատրաստ է ցնամ վտանգաւոր գործողութիւններու հակադարձելու կամ առնուազն պաշտպանուելու:

- Այո՛, կրնամ ըսել, որ Սփիւռքը պատրաստ է Թուրքիոյ կողմէ առնուած ծայրայեղ քայլերուն դէմ դնելու: Օրինակ մը տալու համար տեղին կը համարեմ նշել Լիբանանի պարագան, ուր Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն Թուրքիան տարբեր միջոցներով յայտնի կամ անյայտ՝ ճնշումներ գործադրեց հայերուն վրայ: Վերադառնելով Թուրքիոյ այսօրուան զարգացումներուն, ի՞նչ իրավիճակ կը նախատեսէք մօտիկ

Շաբ.ը էջ 18

Advertisement for Bedros S. Maronian and Siamanto B. Maronian insurance services. Includes contact information for Los Angeles, Glendale, and Pasadena offices, a list of services like Life Insurance, Estate Planning, and Workman's Compensation, and logos for various insurance providers like New York Life, Anthem, BlueShield, Aetna, Health Net, CIGNA, and Kaiser Permanente.

ՌԻԽՏԻ ՀԱՐԻՐԱՍԵԱԿ, ՅԵՏՈՅ ԻՆՉ ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐ

Մկրտեցէ՛ք զմասա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ

ՈՍԿԱՆ ՄԻՌԻՔԱՐԵԱՆ

Թուրքական մամուլը ողողուած է այսօր զանազան յօդուածներով եւ խոր քննարկումներով, հաւատափոխ եղած հայերու՝ իրենց արմատներուն վերադառնալու ժիր եւ աշխոյժ գործունէութեան մասին: Թուրքական մամուլը յաճախակի անդրադարձ կ'ունենայ նաեւ ծագումով հայ, հաւատափոխ, թէեւ ծաղտեալ, Թուրքիոյ քաղաքական կեանքի մէջ բարձր դիրքի հասած անհատներու մասին:

2007 թուականի Հրանդ Տինքի սպանութենէն ետք, թաղման քայլեր թիւն ընթացքին, դեկավարութեամբ թուրք լրագրողներու եւ մասնակցութեամբ կիրթ ստուար հասարակութեան, երբ յայտարարութիւններ կատարուեցան բարձրաձայն՝ «Բոլորս ալ Հրանդ Տինք ենք, բոլորս ալ Հայ ենք» ցուցատախտակներով, այնուհետեւ աշխուժացան ծաղտեալ հայերու մասին կատարուած մամուլի վերլուծումները, որոնց մէջ կարեւոր դերակատար էր թուրք պատմաբան Հալաբոլու-ն որ յայտարարեց, թէ՛ «Այնքան քիւրտերը ընդհանրապէս կրօնափոխ հայեր են, որոնք անուանափոխ ու դաւանափոխ եղած են 1915-ի տեղահանութենէն փրկուելու համար»:

2008 թուականին թուրքական մամուլը նոյնքան աշխուժութեամբ գբադեցաւ ծաղտեալ եւ դաւանափոխ հայերու մասին, երբ Հանրապետական կուսակցութեան երեսփոխանուհի՝ Ճանան Արքիթման յայտարարեց որ Թուրքիոյ նախագահ Ապտիլլա Կիլիլ-ի մայրը հայ է, իրողութիւն մը գոր նախագահը անմիջապէս հերքեց:

Յատուկ աշխուժութիւն նկատեցինք անգամ մը եւս թուրքական մամուլին մէջ, երբ 2010 թուականին Աղթամարի վերանորոգութեան Ս. Խաչ Եկեղեցւոյ բացումը տեղի ունեցաւ, ուր եկած էին նաեւ թուրքացիք եւ քրտացիք դաւանափոխ հայեր: Հոս յատկանշական է անդրադառնալ այն ստոյգ իրողութեան, որ այս բացումի տօնախմբութեան եկած էին մասնակցելու Պոլսոյ Պատրիարքական փոխանորդ՝ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեանի հաւատափոխ (իսլամացած) գաղմիկները, որոնցմէ՛ ոմանք փափաք յայտնած էին մկրտուելու եւ վերադառնալու իրենց արմատներուն:

Ակնյայտ է որ վերջին տարիներուն թուրքական պետութիւնը զանգուածային լրատուամիջոցներով իր ուշադրութեան կեդրոնը դարձուցած է դաւանափոխ հայերը, եւ գանոնք կը նկատէ որպէս սպառնալիք՝ Թուրքիոյ անսասանութեան, այն հեռաւոր մտահոգութեամբ, որ անոնք օր մը վրէժը պիտի լուծեն իրենց հարագատներու անմարդկային սպանդին: Այս իրողութիւնը պատճառ է նաեւ այսօր, որ կարգ մը հաւատափոխ հայեր, որոնք մեծ ցանկութիւն ունին վերադառնալու իրենց արմատներուն, մնան ծաղտեալ՝ սպասելով աւելի բարենպաստ քաղաքական պայմաններու:

Արեւմտահայաստանի տարածքին, մասնաւորաբար ա'յն շրջաններուն մէջ ուր գերիշխող հասարակութիւնը քիւրտեր են, կը նկատենք յատուկ ուշադրութիւն փոքրամասնութիւններու նկատմամբ, նամանաւանդ հայերու: Այս իրո-

ղութիւնը թէեւ քաջալերական է եւ խրախուսիչ, բայց նոյն ատեն դժուար մթնոլորտ կը ստեղծէ բոլոր անոնց համար, որոնք կը մտածեն վերադառնալ իրենց պայենական արմատներուն, որովհետեւ կրնայ հալածողական նոր մթնոլորտ ստեղծել իրենց նկատմամբ թուրք հասարակութեան մէջ:

Կան նաեւ ուրիշներ, որոնք կատարելապէս իսլամացած են, բայց եւ այնպէս տակաւին իրենց աւօրեայ կեանքին մէջ յաճախ կը լսեն դարբերու արհամարանքը՝ «անհաւատ հայու կտոր» անարգական խօսքը, ո'չ միայն լայն հասարակութեան կողմէ, այլ երբեմն նոյն ինքն իրենց ընտանիքի հարագատներու կողմէ: Այս մասին կը վկայէ նաեւ Թուրք պատմաբան Իւմիթ Գուրթ, ըսելով. «Անշուշտ կը վախնան իրենց ինքնութեան վերադառնալու, որովհետեւ տակաւին կը շարունակուի ուրացումի քաղաքականութիւնը: Այս հաւատափոխներէրը կը նկատուին ո'չ թէ երկրի իրական քաղաքացիները, այլ՝ պատանդներ: Այսինքն՝ աղանդի վախկոտութիւն մը: Միայն Հրանդ Տինքին յատուկ է էր ատիկա»:

Նամանակաւ Տիգրանակերտի վերանորոգութեան Ս. Կիրակոս եկեղեցւոյ բացումէն ետք, որ կը նկատուի Միջին Արեւելքի մէջ գտնուող հայկական մեծագոյն եկեղեցին, կը նկատենք յատուկ աշխուժութիւն ծաղտեալ հայերու մօտ-վերադարձ դէպի ինքնութիւն, մկրտութիւններ, ամուսնութիւններ, հայերէն լեզուի եւ պատմութեան դասեր, հայկական երաժշտութիւն: Բայց այս բոլոր ցանկութիւններէն ետք, դժբախտաբար հօտը կը մնայ առանց հովիւի եւ Ս. Կիրակոս ալ կը շարունակէ ըլլալ գբօսաշրջիկութեան վայր:

Գիտենք բոլորս ալ թէ ինչ դժբախտ պատահարներու եւ պայմաններու տակ հայ ազգի զաւակներ իսլամութիւնը ընդունեցին որպէս փրկութեան վերջին լաստ՝ անմարդկային, արիւնարբու թուրք ցեղասպանին «եաթաղան»ին զոհ չերթալու համար: Այսօր անոնց զաւակներն ու թոռները կը փորձեն վերադառնալ իրենց արմատներուն: Ինչ պիտի ըլլայ մեր կեցուածքը: Իրաւունք ունի՞նք ըսելու որ անոնք այլեւս հայ չեն, որովհետեւ հաւատափոխ եղած են: Հայց. Առաքելական Եկեղեցին իր նուիրապետական բոլոր կառուցներով՝ ըսելիք չունի: Ահաւասիկ առաքելութեան նոր դաշտավայր, ուր թէեւ չկան Հոռմի հետապնդող ու հալածող կախերական զօրքերը, չկան գետնափորերու մէջ հաւաքուելու եւ աղօթելու դժուարին պայմանները, սակայն կայ Թուրք պետականութեան անհանդուրժող քաղաքականութիւնը: Իսկ մենք պիտի կարենա՞նք ունենալ կամ քն ու կորովը՝ յաղթահարելու բոլոր պայմանները եւ ձեռք երկարելու մեր իսլամացած եղբայներուն եւ քոյրերուն, որոնք ներքնապէս կը տառապին իրենց ինքնութեան վերադառնալու ազնիւ ճանապարհ մը գտնելու համար: Իր արմատներուն վերադառնալ ուղող հայուն, առանց խտրութեան թէ ինչ կրօնի կը պատկանի, պիտի բանա՞նք մեր մտքի, սրտի եւ հոգիի դռները, թէ՛ անգամ մը եւս հոգեբանական ցեղասպանութեան պիտի դատապարտենք զիրենք, որովհետեւ իրենց

մեծ հայրերն ու մեծ մայրերը դաւանափոխ եղած են:

Ցուցահանդէսը կազմակերպուեց Վիրահայոց Թեմի առաջնորդարանի եւ Էջմիածնի քաղաքապետարանի նախաձեռնութեամբ, Վրաստանի հայ նկարիչների միութեան ու Վիրահայոց Թեմի «Հայարտուն» կենտրոնի աջակցութեամբ: Բացման հանդիսութեանը յատուկ ժամանել էին Էջմիածնի քաղաքապետարանի պատուիրակութիւնը քաղաքապետ՝ Կարէն Գրիգորեանի գլխավորութեամբ, Վիրահայոց Թեմի Սամցխե-Ջաւախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տէր Բաբգէն վարդապետ Սալբիլանը եւ Վրաց Ուղղափառ Եկեղեցու Ախալքալաքի եւ Կոմբուրդոյի միտրոպոլիտ Նիկոլոզ Փաճուաշվիլին:

Էջմիածնի 21 նկարիչների շուրջ 50 աշխատանքները դիտելու էին եկել ինչպէս հայ, այնպէս էլ վրացի եւ այլազգի նկարիչներ, արուեստագէտներ, մտաւորականներ, արուեստասէր հասարակայնութեան ներկայացուցիչներ: Ցուցահանդէսը բացեց Վիրահայոց

Թեմի մշակույթի բաժնի տնօրէն, «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Չիլիլեանը:

Գոյների միջոցով արտայայտուելու ունակութիւն, կեանքի ուրիշմը, զգացմունքները վրձնահարուածով փոխանցելու վարպետութիւն, կտանների գեղեցիկ ցուցադրութիւն՝ այսպէս արժեւորեցին ցուցահանդէսը բանախօսանք, Վրաստանի խորհրդարանի պարզամաւոր Ռուսլան Պողոսեանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիւրի Շահնազարը, նկարիչ Ներսէս Մելիքեանը, մանրանկարիչ Մերուժան Շահումեանը, քաղաքի Սակրեբուլոյի ներկայացուցիչ Մարգարիտա Խիդիրբեգաշվիլին եւ միւսներն իրենց ելույթներում: Իսկ մետրոպոլիտ Նիկոլոզ Փաճուաշվիլին յայտարարեց՝ Ախալքալաքում մշտապէս գործող պատկերասրահ բացելու իր նպատակի մասին: Էջմիածնի քաղաքապետ Կարէն Գրիգորեանը երախտիքի խօսքեր ուղղեց Վիրահայոց Թեմի առաջնորդին Սուրբ Էջմիածնում Թբիլիսիում ցուցահանդէս կազմակերպելու իր մտալոյսման իրականացմանը ցուցաբերած աջակցութեան համար եւ Սրբազան Հօրը փոխանցեց զօրավար Մանուէլ Գրիգորեանի կողմից շնորհած «Երկրապահ միութեան 20-ամեակ» մետալը:

Վերջում իր օրհնութիւնը յղելով ներկաներին, գնահատանքի խօսք ասաց Վիրահայոց Թեմի առաջնորդը: Սրբազանը ողջունեց

Շաբ.ը էջ 14

**Ձեր Ծանուցումները
Վստահեցէ՛ք
«Մասիս»
Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680
F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԿԵ ԵՆՐԿԱՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԻՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԳՐԻՍՏԱՆԻՍ

ՓԵՍԱՑՈՒՆ

Տեղի կունենայ Հինգշաբթի 29 Հոկտեմբեր 2015 երեկոյան ժամը 7:30-ին
ՀԿԲՄ Կարօ Սողանալեան Սրահէն Ներս
1060 N. Allan Avenue, Pasadena, CA
Մուտք՝ \$10 ներառիպ ընթրիք

ԿՐԿԵԱՆՑ


GAIDZ YOUTH ORGANIZATION
PRESENTS GAIDZ MOVIE NIGHT
THE BRIDE FROM CIRCUS (2011) - Armenian comedy film

Thursday, October 29, 2015 at 7:30 pm
AEBU Garo Soghanalian Hall
1060 N. Allan Avenue, Pasadena, CA
Fee \$10, dinner included

ԹԱՏՐՈՆ

«ՈՒՐԱԽ ՀԱՅԵՐ» HAPPY ARMENIANS (Անդրանիկ բեմադրութեան առթիւ)

Վերոյիշեալ թատերախաղի ծանուցագիրքին ազդուած եւ ուրախ տրամադրութիւն մը բնութիւնը կանխամտածումով, Հոկտեմբեր 9ին, 2015, ներկայ եղանք Նորթ Հոլիվուտի Art Center համալիրի թատրոնի փոքր դահլիճը: Այդ երեկոյ պիտի վայելէինք vista players նորակազմ թատերախումբի «Ուրախ Հայեր» (Happy Armenians) բեմադրութիւնը:



Գրեթէ բոլոր ներկաներուն համար թէ թատերասրահը եւ թէ երիտասարդ արուեստագէտ Արամ Գուլումճեանի գրած եւ իր կողմէ իսկ բեմադրուած (անդրանիկ ներկայացում) բեմադրութիւնը նորութիւն մըն էր:

Նշենք որ Արամ Գուլումճեանի գլխավոր մտահոգութիւնը եղած է ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած պատշաճ թատերախաղ մը պատրաստելը: Հեղինակը իր նօթերուն մէջ այս մէկը կը բացայայտէ ըսելով որ «Ուրախ Հայեր»ը ձօնուած է 1.5 միլիոն նահատակներու եւ իր մօր Աստղիկի յիշատակին, որ իրեն համար կը նկատուի «ամենուրախ հայր»...:

Գալով անգլերէն լեզուով բեմադրուած թատերախաղի նիւթին՝ կարելի է անվարան զայն բնութագրել որպէս տարօրինակ եւ ֆանթասթիք համադրում մը, որուն մէջ առկայ է մեր անցեալի պատմութիւնը (Կիլիկեան թագաւորութիւն) Հայրենիքի պաշարումը, ներխուժող հրոսակներ սահմաններէն եւ այլ ցնորամիտ երեւակայութիւններ: Մէկ խօսքով հինն ու նորը, անցեալն ու ներկան, պալատական կեանքն ու աշխարհիկ բարքերը (միասեռականութիւն, եւայլն), երեւան հանող հակասութիւններ: Այս բոլորը իրար հետ շարկապելով երբեմն զանոնք կ'ընդերուզ լրսանձելուսհայ գաղութի աւօրեայ մտորումներուն հետ, որոնք կ'երկարին 1375ի Կիլիկեան թագաւորութեան անկումէն մինչեւ Մեծ Եղեռն:

Բիէսի դերակատարները արհեստավարժներ էին եւ լաւագոյնս

կրցան դրսեւորել իրենց կերպարները, մամաւորաբար Լեւոնը Daniel Hubbard, Սիրան՝ Heather Lynn Smith, Փաթրիքը՝ Tavis L. Baker, Թագուհին՝ ձէյտ Հայկուշը եւ թագաւորը՝ Gregory De Petro:

Ուշագրաւ էին տարագները, բեմայարդարումն ու երաժշտութիւնը, որոնք անթերի կերպով պատրաստուած էին «Վիսթա» թատերախումբի հայ անձնակազմին եւ արուեստագէտներուն կողմէ:

Այս ֆանթեզին դիտելէ ետք կու գանք այն եզրակացութեան որ գեղարուեստական բարձրորակ խաղարկութիւն մը հրամցուած էր հանդիսականներուն: Հաւանաբար բեմադրիչն ունէր հետեւեալ պատգամը թատերասէր հասարակութեան: ա. Պատահական դեկավարները չընտրել:

բ. Արդար ըլլալ եւ խորակասութեան հետ մնալ:

գ. Ուշադիր, իմաստուն եւ շրջահայեաց ըլլալ:

դ. Ազատասէր ըլլալ եւ չապահինիլ ուրիշներու:

Այսուհանդերձ որոշ վերապահութեամբ եւ նուազ յագեցու-


ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ» ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ

Պատմաբան Սամուէլ Յակոբեանն այսօր ներկայացրել է իր հեղինակած «Հայաստանի Հանրապետութիւն» 11 հատորանոց պատմական հանրագիտարանը: 11 հատորները նա ներառել է մէկ գրքում՝ ներկայացնելով ՀՀ բոլոր մարզերն ըստ բնակավայրերի՝ իրենց պատմաշակութային միջավայրով հանդերձ: Հատորում անդրադարձ է կատարուել նաեւ Արցախին ու նրա պատմաճարտարապետական միջավայրին:

Մօտ երեսուն տարիների աշխատանք՝ գետեղուած մէկ գրքում, որը կոչուած է «Հայաստանի Հանրապետութիւն»: Պատմաբան Սամուէլ Յակոբեանի 11 հատորանոց հանրագիտարանում Հայաստանի բոլոր մարզերն են ըստ առանձին բնակավայրերի, մօտ տասը հազար լուսանկարներ, եռալեզու ամփոփ տեղեկատուութիւն:

Մասամբ ներկայցուած է նաեւ Կիլիկեան Հայաստանն ու Արցախը: «Ի դէմս այս հանրագիտարանի՝ ես փորձեցի ստեղծել իւրօրինակ մի անձնագիր, որը իւրաքանչիւրին հնարաւորութիւն կը տայ ճանաչել Հայաստանը իր բնակավայրերով, նրանց պատմութեամբ ու պատմաճարտարապետական յուշարձաններով հանդերձ», ասում է պատմաբանը:

Ըստ նրա՝ աշխատութիւնը ներկայացնում է ոչ միայն գրանցուած ու հանրութեանը յայտնի յուշարձանների հարուստ ցանկ,



այլեւ արժէքաւոր, սակայն անյայտ յուշարձաններ, թանգարաններ, տուեալ բնակավայրում գտնուող ռազմավարական նշանակութիւն ունեցող գործարաններ, Հայաստանի ազգային փոքրամասնութիւնների մշակոյթը ներկայացնող յուշարձաններ եւ այլն:

«Հայաստանի Հանրապետութիւն» մէկ գրքում ամփոփուած 11 հատորանոց հանրագիտարանի հազար օրինակները կարող են դառնալ իւրաքանչիւրիս սեղանի ցանկալի գիրքը, սակայն հեղինակի ցանկութեամբ դրանց առաջին հասցէատէքերը կը լինեն կրթօջախներն ու հայկական զօրամասերը:

Ծուծեամբ դուրս եկանք սրահէն, քանի որ բիէսի խորագիրը՝ Happy Armenians խոտոր հանդիսացաւ իր բովանդակութեան հետ եւ չարդարացուց ինքզինքը:

Միւս կողմէ գնահատելի է գրող եւ բեմադրիչ Արամ Գուլումճեանի նորարարութիւնը թա-

տերական կեանքէն ներս: Իրեն կը մաղթենք յարատեւութիւն եւ նորանոր յաջողութիւններ: Սփիւռքահայ թատրոնը կարիքն ունի նոր բեմադրիչներու: Իսկ Ա. Գուլումճեան կրնայ արդարացնել իր վրայ դրուած յոյսերը:

Գ. ՄՈՒՈՅԵԱՆ

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ

Շարունակուած էջ 13-էն

էջմիածնի քաղաքապետարանի, Սամցխե-Ջաւախքի ընդհանուր առաջնորդական տեղապահի, Ախալքալաքի ու Կոնստանդնուպոլիսի մետրոպոլիտի, ինչպէս նաեւ էջմիածնից ժամանած նկարիչների ներկայութիւնը ցուցահանդէսին կարեւորեց երկու քրիստոնեայ ժողովուրդների մշակութային բարեկամութիւնը:

Ախալքալաքի մետրոպոլիտի եւ Սամցխե-Ջաւախքի առաջնորդութեան փոխանորդի հրահրով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկարիչները մէկ ամիս յետոյ կը ցուցադրուեն Ախալքալաքում: «Սուրբ Էջմիածնի նկարիչները թբիլիսիում» ցուցահանդէսը «Հայարտուն» կեդրոնում կը շարունակուի մինչեւ Նոյեմբերի 14-ը:

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

The Cotsen Institute of Archaeology at UCLA announces
The 2nd Hampartoum and Ovsanna Chitjian Conference in Armenian studies:
"Armeno-Persian Relations and the Persarmenian Community Throughout the Ages"
Saturday, November 14th, 2015. 11:00 AM – 5 PM
Featured speakers:
Dr. Marco Brambilla: "The Architecture of the Houses of the Armenians in New Julfa." (University of Rome)
Prof. Touraj Daryee "Reflections on the History and Society Arshakuni Armenia and Arsacid Iran." (UC Irvine)
Ms. Kristine Martirosyan-Olshansky: "Prehistoric Connections between the Inhabitants of the Armenian Highlands and the Iranian Plateau." (UCLA).
Prof. Bert Vaux "The Armenian Dialect of Salmast." (University of Cambridge)
To be held on UCLA campus in Royce Hall, Room 314
Free Admission.
Paid parking available in Structure 4 or 5. \$12.
RSVP required for luncheon: <RSVP@ioa.ucla.edu>
This Conference is dedicated to the memory of Archbishop Gorun Babian (1941-2015), Prelate of New Julfa (1978-2002).

ՊԱՏԱՌԻԿՆԵՐՆԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՐԱՅԱՍՏԱՆԵՆ ԽԱՐԲԵՐՂ-ԷԼԱԶԻԿ

ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒՆՆԱՆ

Մուշէն ճամբայ ելանք դէպի Խարբերդ: 158 մղոն (254 քմ) ճամբան կտրեցինք չորս ժամէն: Թող ներուի ինծի եթէ դարձեալ գովքը հիւսնեմ մեր աննման բայց կորուսեալ (առժամապէս) հայրենիքին: Գեղեցիկ, կանաչ դաշտերն ու սիգապանծ լեռները գիրար կը գրկէին ամէն տեղ: Հարուստ այս դաշտերը կ'ոտոզուէին Արածանի գետով եւ անոր մէջ հոտող բազմաթիւ զուլայ գետակներով: Արածանին ծեփծեփումով ու նազանքով իր հանգիստ պարը բռնելէն ետք՝ կ'երթար միանալու իր մեծ եղբոր՝ Եփրատ գետին: Խարբերդը կամ էլ չափիկը շրջապատուած է բնական Հազար լիճով եւ Քէպան, Քարաքախա, Քրայլքիզ եւ Օզլունձէ ջրամբարներով: «Մովածաւալ» լիճ եւ գիրար գերազանցող ջրամբարները անհատնում ուռուցան ջուր կրնան հայթայթել շրջանի դաշտերուն: Կրնա՞ք պատկերացնել հարուստ, կարմիրի գարնող սրճագոյն հողը կանաչապատուած եւ հազարաւոր, գունաւոր ծաղիկներով գարդարուած, երկնքի եւ շրջակայքի լիճերուն կապոյտներուն միջեւ, ճերմակ ամպերուն հետ խաղ բռնած արեւուն փայլուն ճառագայթներով ջերմացող ... : Տակաւին չխօսիմ հազարաւոր ծառերուն մասին, որոնք փսփսուքով կը խօսէին իրարու հետ: Պողտու ծառերը երբեմն կը հրապուրէին մեզ, երբեմն ալ մեր գայլոյթը կը բազմապատկէին ... Թուրքերը կը վայելէին այս բոլոր բարիքները Հայկեան երկրին: Մերը չէի՞ն ստոնք...: Եւ մենք ստիպուած ենք պահ մը նայիլ ու անցնիլ: Պահ մը նայիլ ու ... կրկին անգամ անբակտէի հաւատքով երդնուլ՝ որ պիտի գայ օրը՝ երբ այս բոլորը նորէն մերը պիտի ըլլան: Գիտեմ, ոմանք պիտի ծիծաղին հիմա երազներուս վրայ: Ո՞վ կը համարձակէր երազել անգամ որ Օսմանեան Կայսրութիւնը կրնայ տապալիլ (գլուխդ վրայ կու տալի), կամ Սովետական Միութիւնը պատմութեան կրնայ անցնիլ (դէպի Սիպիւրիա մէկ ուղղութեամբ շոգեկառքով կը ճամբորդէիր), կամ հարիւր միլիոն արաբներուն սրտին վրայ իսրայէլ մը տեղծուիլ: Անգլիական Կայսրութեան (The British Empire) վրայ արեւը մար չէր մտնէր ... հիմա՞ Անգլիացիները արեւը տեսնելու համար Միջերկրական Վոյի եզերքները պէտք է սլկոյան: Երբոր վաղը Սկովտիան եւ այլ մասերը եւս անջատուին Անգլիայէն, այն ատեն կը խօսինք: Երագէ, եւ վագէ երազիդ ետեւէն: Հարիւր տարի առաջ լուսինը բանաստեղծներու ներշնչումներուն աղբիւրն էր: Ո՞ր գիտնականը կրնար երազել որ օր մը լուսինին վրայ մարդիկ պիտի քայլէին (լուսնոտ է կ'ըսէին): Ո՞վ կրնար երազել որ ձեռքիդ մէջ պզտիկ գործիք մը բռնած պիտի կարենայիր աշխարհի որեւէ անկիւն ուրիշ մարդու մը հետ խօսիլ անոր դէմքն ալ դիտելով: Քեզի խնթ ըսելով կը կապէին: Օր մը, օր մը մենք պիտի տիրանանք մեր երազին: (Մեծն Աղեքսանդր իր ողջութեան կայսրութիւնը բաժնեց իր մտերիմ գորավարներուն): Երբ իրեն հարցուցին «քեզի՞ ինչ մնաց», ան պատասխանեց «Յոյսը»):

Մուշէն ճամբայ եւ հանգստաւէտ էր: Կարծես մեզի համար նոր ասֆալթապատած էին ... : Երբ Խարբերդի մօտեցանք, արուարձաններէն արդէն կրնայինք կռահել որ շատ արդիական եւ գեղեցիկ քաղաք մը պիտի մտնէինք: Էլ չափիկի մէջ տեսանք 1975-ին հիմնուած Ֆիրաթ Համալսարանը որ Արեւելեան Անատոլիոյ յառաջատար կրթական կեդրոններէն մէկն է: Դարձեալ լայն ու մաքուր ծառուղիներէ անցնելով սկսանք բարձրանալ բլուրն ի վեր: Հեռուն նշմարելի էր մեծ բերդ մը: Որքան կը բարձրանայինք այնքան կը գեղեցկանար քաղաքին համայնապատկերը: «Այս շրջանը հայկական շրջանն է» ըսաւ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանը: Դոկտորը Խարբերդի գաւակ էր: «Խարբերդ» կը նշանակէ «քար» եւ «բերդ» կամ քարէ բերդ: Ըստ ուրիշ տեսութեան մը, Ք. Ա. 2000-ական թուականներուն այս շրջանի մէջ կար «Խար» գիւղը եւ քիչ մը վերը՝ բերդը: Եւ այսպէս, գիւղը եւ բերդը իրարու խառնելով ստացուած է Խարբերդը: Պատմական Խարբերդը էլ ազդեցիկ հինգ քմ. հեռու կը գտնուի: Խարբերդի բերդը շինուած է կամ աւելի մեծցուած եւ ամրացուած է Ուրարտացիներու կողմէ Ք. Ա. 9-րդ դարուն: Պէտք է կենդանի աչքերով տեսնել բերդը որպէսզի կարենաս գաղափար մը կազմել անոր մեծութեան մասին, եւ անկէ հետեւցնել՝ Ուրարտական թագաւորութեան հզօրութիւնը: Մասնակէտի ճակատամարտէն (Օգոստոս 26, 1071) քիչ ետք, 1085-ին Խարբերդը ինկաւ Սելճուքեան լուծին տակ: 1336-ին, Մոնկոլները գրաւեցին քաղաքը, եւ բնականաբար սարսափելի ջարդ մը տուին ժողովուրդին: 17-րդ դարուն, ենիչերիները եւ քիւրտները (Քիւրտ Չոպան Օղու Բեկ) ըստ կամս կը ջարդէին եւ կը կողոպտէին անգին ժողովուրդը: Շարունակական ջարդերուն պատճառով, հազարաւոր հայեր գաղթեցին դէպի արեւելք, յարաբերաբար աւելի ապահով վայրեր: Խարբերդը իր ատենին շրջանի ամենաչառաջացեալ քաղաքն էր: Ըստ ոմանց՝ շրջանի Աթէնքը: Իր կրթական հաստատութիւններով, վարժարաններով, Աստուածաբանական Ուսումնարաններով եւ Գոյեմներով այնպիսի գարգացած սերունդ մը պատրաստած էր որ Օսմանեան Կայսրութեան պետական եւ կառավարական բազմաթիւ պաշտօններ իրենց վստահուած էին: Խարբերդը ծաղկուն էր նաեւ արհեստներով, արուեստներով, ճարտարագիտութեամբ, երկրագործական արտադրութիւններով, տեսակաւոր գինիներով, հանքերով եւ թանկագին քարերու եւ ոսկիի արհեստանոցներով: Հոս էր նաեւ Սուրեանի Օրթոտոքս եկեղեցու կեդրոնը, 11-րդ դարուն հաստատուած: Սուրիանիներու վերջին Առաջնորդը (Եպիսկոպոսը), Սիրիլ Մանսուր, 1915-ին հայերու, Ասորիներու եւ այլ քրիստոնեաներու հետ նահատակուեցաւ: 1914-ին մօտ 20,000 բնակչութիւն ունէր Խարբերդը, 10,000-ը հայ, մնացեալը թուրք, քիւրտ կամ այլազգ:

սարդները գինուորագրեցին, խառնութեան կողոպտեցին որպէս «պատերազմական մթերքներու անհրաժեշտութիւն» (խաղաղութեան դաշինքէն վեց ամիս ետք փոխարժէքը վճարելու թրքական խոստումով...), տուներէն հաւաքեցին ինչ «գէնք» որ կրնային «գտնել», գրաւեցին մինչեւ անգամ խոհանոցի դանակները: Խարբերդցիներէն շատերը, տեղահանութիւնէն եւ աքսորէն քանի մը օր առաջ, իրենց պաշտօնական փաստաթուղթերը, դրամները, ոսկիներն ու թանկարժէք իրերը յանձնեցին կամ պահ դրին Ամերիկացի միսիոնարներուն եւ Ամերիկեան Հիւպատոսին քով: Ըստ զանազան հաշիւներու, մէկ ամսուա ընթացքին աւելի քան 100,000 Օսմանեան հնչիւն ոսկի պահ դրուեցաւ Ամերիկացիներուն քով: Բնականաբար թրքական կառավարութիւնը աքսորէն ետք պահանջեց այդ ոսկիներն ու իրերը որպէս «լքեալ գոյք»: Ամերիկացի միսիոնարներուն եւ Հիւպատոսին (Լէսլի Ա. Տէյվիս) կառավարութեան մօտ Խարբերդցիներուն տեղահանութիւնն ու ջարդը կասեցնելու բոլոր ջանքերը ապարդիւն անցան: Տեղահանութիւններէն անմշակապէս ետք, թուրքեր սկսան կազմակերպուած կանոնաւորութեամբ կործանել եւ փճացնել հայկական եկեղեցիներն ու հաստատութիւնները, ինչպէս նաեւ աւելի քան 2000 բնակարան: Ջարդերէն ճողոպրածներէն ոմանք հաստատուեցան Արեւելեան Հայաստան (Ռուսահայաստան) Սուրիա, Լիբանան, իսկ ուրիշներ՝ աւելի ուշ Ֆրէզնոյի, Դուլարիի եւ Սան Ուաքին Հովիտի մէջ, Քալիֆորնիա: Դէպի Խարբերդի Ուրարտական բերդի ճամբուն վրայ հանդիպեցանք հայկաւոր վերաշինուած տուներու: Այս շրջանը «Գուլաքեուկ» կը կոչուէր: Շատ գեղեցիկ եւ ճաշակաւոր տուներ էին, բարձունքի վրայ, սքանչելի տեսարանով: Մօտեցանք բերդին: Ինչպէս ըսի, շատ բարձր եւ անառիկ բերդ մըն էր: Մէկ կողմը շատ խորունկ անդունդ էր, միւս երեք կողմերը՝ ժայռերու վրայ շինուած շատ բարձր պարիսպներով ամրացուած: Բնականաբար թրքական զգուշի դրօշակը բերդին վրայ կը ծածանէր: Հայերը ընդհանրապէս այս բերդին անմիջական շրջակայքին մէջ հաստատուած էին: Առ այդ, այցելեցինք Սբ. Աստուածածին եկեղեցին: Միայն մէկ ու կէս պատ մնացած էր այդ փառաւոր եկեղեցին: Ես վերէն դիտեցի աւելցնելով: Չեմ գիտէր եթէ վարիճները եւ աղօթեցին կամ ոչ: Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի մեծ հօր հայրը այս եկեղեցիին մէջ ծառայած է իրբեւ քահանայ: Քիչ մը անդին, բազմաթիւ կրպակներ եւ ճաշարաններ կային զբօսաշրջիկներուն ծառայելու: Մօտեցանք: Տեսայ որ հրապարակի նմանող վայրի մը մէկ անկիւնը մարդիկ «Օրչիք Շէֆերի» կը պատրաստէին: Մենք այս ճերմակ շաքարին կըսէինք «նշանաբաշտ» կամ «հարսանիքի» շաքար: Շատ մեծ կաթսայի մը մէջ թարմ նուշ լեցուած էր: Մինչ կրակը տակէն կը վառէր, եփողները կամաց-կամաց ճերմակ շաքարի փոշի, ալիւր, մեղր եւ կաթ լեցնելով կը խառնէին կաթսային պարունակութիւնը: Շատ անուշ կը բուրէր: Շաքարը, ալիւրը, մեղրը եւ կաթը կը պարուրէին նուշերը եւ այսպէս շատ գեղեցիկ ճերմակ գոյն մը կու տային անոր: Քանի մը հատ հրամցուցին, չկրցայ

մերժել ...: Քիչ ետք երբ խումբին միւս անդամներն ալ եկան ինծի միանալու, հարցուցին որ ի՞նչ կը շինեն մարդիկը: Բացատրեցի: Տիգրան Ղորղորեանը, որ ինծի պէս լաւ ախորժակ ունէր, քիլօ մը գնեց: Միւսներն ալ սկսան նոր պատրաստուած «Օրչիք Շէֆերի»-էն գնել: Մարդիկը լաւ առեւտուր ըրին: Կնոջս Ալիսին չնայած մէկ պահուեալս Գէորգին հետ ... գաղտնօրէն «համտեսելու»: Ըստ "Ankara Chamber of Commerce"-ի, Խարբերդի խոհանոցը Թուրքիոյ երկրորդ ամենաճոխն է, անոր ճաշացանկին վրայ կան 154 տարբեր տեսակի ճաշեր, անուշեղէններ եւ ըմպելիքներ (երանի Խարբերդցիներուն...): Նախապէս Մէջրիէ կոչուող քաղաքամասին մէջ այցելեցինք Ասորիներու փոքր եկեղեցին: 7-8 ոտք բարձրութեամբ ցանկապատով շրջապատուած տարածութիւն մըն էր: Ներսը տուն մը կար, որուն սենեակներէն մէկը, ուր հազիւ 25 հոգի կրնայ առնել, եկեղեցիի վերածած էին: Մերուկ Ասորի քահանան մեզ դիմաւորեց, ապա տան դրան առջեւ երէցիկներ մեզ ներս հրաւրեց: Իմացանք որ երէցիկներ հայ է: Մտանք ներս: Քանի մը շարք փայտեայ նստարաններու դիմացը փոքր խորան մը կար, խաչերով, Աստուածածնի եւ Մանուկին սրբապատկերներով, մոմերով եւ պզտիկ սկիւնով մը ամբողջացած: Պատերուն վրայ սրբապատկերներ կային, հին, հաւանաբար նուագագոյնը հարիւր տարեկան: Քահանային հետ աղօթեցինք: Իրապէս որ պահը շատ չուզի էր: Մեր լուծմանը դրան քով դրուած գանձանակին մէջ նետելով դուրս ելանք: Այս եկեղեցին եւ քահանան կը ծառայէին նաեւ Խարբերդ մնացած 12 հայ ընտանիքներու հոգեւոր կարիքներուն: Մեր խումբէն Քէթի Ղորղորեանը կարճ տափատ (չորթ) հագուած էր անթեւ վերնաշապիկով: Երբ դուրս պիտի ելլէինք, Ասորի քահանան դիտողութիւն ըրաւ իրեն իր այդ հագուածքին համար: «Որիչ ատեն ասանք հագուած հոս, այս եկեղեցին մի մտներ» ըսաւ: Խեղճ Քաթիան շատ չուզուեցաւ, բայց իր ամուսինը, Տիգրանը, պահը «չարաշահելով», քիթին տակէն խնդալով ըսաւ «չըսի՞ քեզի, որ մարդավարի բան մը հագուես, հիմա ինծի ալ ամացուցիւր, այս մարդիկը ի՞նչ պիտի մտածեն մեր մասին, գալ անգամ մեզ ներս պիտի չ'առնեն... յաջորդին ինծի հետ հոս պիտի չ'գաս» Ղորղորեանները նպատակ ունէին քանի մը տարի ետք կրկին անգամ այցելելու Արեւմտեան Հայաստան: Բակին մէջ Ասորի քահանան զանազան տեսակի բանջարեղէններ ցանած էր իր օրապահիկին որպէս օժանդակ: Քիչ մը անդին գերեզմանաքարեր կային: Գացինք այցելելու մեր մեռելները: Ննջեցեալներուն անունները փորագրուած էին քարերուն վրայ - Արաքսի Ստեփանեան, (1312)?-1940, Թորոս Օղլու Պարսամ, (1332)?-1974, Մանուկ Վէ (Եւ) Սօֆեա զբզբ (աղջիկը) Մարիսա, (1334)?-1971, եւ տակաւին ուրիշներ (կարծեմ ծննդեան թիւերը իսլամական թուականներ են: Գացինք վկաններ ըլլալու հայկական թաղերու վիճակին: Անխնամ մնացած տուններուն քով կային վերանորոգուած տուններ ալ: Հողէ ճամբաները հարիւր տարի նոյն

ՆԵՐՅԱՅԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԵՍԻԼՔԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

(Ծովիկ Մարգարեանի Sopporականին առիթով)

Պետրոս Ալահայտոյեան

Ներհայեցողութեան, յարատեւ ճիգի ու կամքի, նաեւ անվատութեան փառաւոր յաղթանակ մը, նպատակասլաց կազմակերպուած ջանասիրութեան վեհ օրինակ:

Ծովիկ Մարգարեանին սոյն յաղթանակը հեշտ չեղաւ. ան երբէք չմոռցաւ մօր մը եւ տանտիրինոջ մը իր ամէնօրեայ պարտականութիւնները որոնք կը կատարէր անտըրտունջ եւ անյապաղ. թէեւ խոհանոցը եւ դաշնակը գրեթէ կողք կողքի են իրենց փոքր տան մէջ, սակայն ստեղծագործ կամքն ու ինքնաստեղծ տեսիլքը երբեք չլքեցին զինք:

Տասնեակ մըն էինք միայն USC-ի Thornton School of Music ի հանդիսասրահէն ներս Ծովիկին DMA-ի (Doctor of Musical Arts) վերջին պաշտօնական քննութեան օրը՝ միս մինակը ճակատումի ասպարէզ կարգալու այդ օրը, 15 Հոկտեմբեր 2015ի երեկոյեան: Եւ ահա ճշտուած ժամուն, համեստ, լուռ ու կեդրոնացած, հայ ընտանիքի մայր եւ կատարեալ տանտիրին, աշխատանքի ռահիրայ անընկճելի Ծովիկը ժամանեց բեմ:

Տաս էջնոց գիտական լրջութեամբ եւ պատմական ճշգրտութիւններով հարուստ յայտագիրին առաջին տողը նուիրած էր իր մօրը՝ Յասմիկ Մկրտչեանին (Պէլլուի)՝ «Այս ամբողջ յայտագիրը կը ձօնեմ իմ Մօրս, կեանքիս մեծագոյն ուսուցիչս, ան որ ինծի նուիրած է երաժշտութեան վեհ նուէրը, իբր կեանքի ծայրագոյն ընծայ, գերագոյն շունչ»:

Այս 80 վայրկեան տեւող մենամարտ-մենահամերգին ընդհանուր խորագիրն էր «Ֆանդէզիներու Ծաղկեպսակ մը» [1780էն ցայսօր]: Հոն տեղ գտած էին, դասական ծանօթ կտորներու կողքին (Պաի, Մոցարտ, Պրամզ (Գործ-116ի, 1892, Եօթ Ֆանթէզիները)՝ երկու գերարդի հեղինակներու գերարտայայտապաշտ գերխորհրդին կտորները: John Corigliano ի (ծն. 1938) Fantasia on an Ostinato (1985), որմով սկսաւ համերգը եւ 80-ամեայ Roger Reynolds ի սարսափելի Fantasy for Pianist (1964) երկը, որ փակեց սոյն համերգը (հետաքրքրական է ընթացիկ «for piano»ի փոխարէն «for Pianist» նշումը):

Ծովիկին համայնագիտաբանական ճոխութեամբ ամբողջացած յայտագիրը կու տայ «Ֆանթազիա» բառին լրիւ ստուգաբանութիւնը, ապա յայտագիրին իւրաքանչիւր կտորին մասին հակիրճ բայց ամբողջական տեղեկութիւններ: Ան օրինակ կը բացատրէ ինչու Պաիի Ֆանթէզին (1720) կը հետեւէր Մոցարդի կտորին (1782) եւ մէկը միւսին շարունակութիւնը նկատի ունեցած է: Ապա, գերարդի Ֆանթէզիները յայտագիրին սկիզբը եւ վերջը գետեղելով - փոխանակ ժամանակագրութիւնը պահելու ուզած է ամբողջացնել երգափունջին գունագեղութիւնը: Պրամզի Եօթ փոքր կտորները արդեօք ցողուններն ու ոստերն էին այս բարդ նուագապսակին:

Այդ օր մենք լսեցինք արտադաշնամուրային ձայներ: Անոնք կը յառաջանային ստեղնաշարէն դուրս, գործիքին մէջի «աղիքներուն» (լարերուն) մէջ,

նոքի նուագուած ձայներէն: Շատ տարբեր հնչիւններ են անոնք. ոչ միայն անսպասելի այլազանութիւն կը բերեն այլ անտարազելի ձայնահամակարգ մը կը ստեղծուի՝ երագային եւ արտաաշխարհային: Ընդհանրապէս «Ֆանդէզի»ներու չնաշխարհիկ ներշնչմանը անծանօթ չեն ազատ երեւակայութեան այս աննախատեսելի յորձանքներն ու թռիչքները, որոնք բնականաբար կը հակադրուին կանոնագրուած օրէնքներու դասական շարադասութեան: Անոնք կարծես ոչինչէն ստեղծուած անսպասելի բուրմունքներ են՝ ներշնչանքի թրթռուն զգայարանքներէն փրթած կամ ապրուած թովչանքներու գրկին մէջ հիւսուած կամ ժայթկած

ցայտաղբիւրներ, որոնց մոգական դիւթանքին կը յարիս ահամայ... կամ, ընդհակառակն, յաճախ նուագելին եւ աննուագելին կը գոյակցին նոյն միջոցին, նոյն նախադասութեան մէջ՝ մէկը աջ ձեռքի մատներով գծագրուած, միւսը աջ ձեռքով թմբկահարուած, կամ կրնայ անչափելի յանկարծ կարելի դառնալ, կամ անկշռութաւորելի կերպարանք ու մարմին կը ստանայ յանկարծ: Իսկ մատուցող այնքա՞ն նուրբ պիտի մօտենայ այս կախարդական անշրպետին ուր յանկարծ պահուրտած ճիչ մը կամ փափուկ շոյանք մը իր կարծ կեանքը ուզէ նուիրել մատներուդ շնչառութեան, ծիածնանալ եւ աներեւութանալ հազիւ ծնած կամ ծաղկիլ փորձած կամ հազիւ երաժշտաւորուած: Կամ ծնուելիք ձայնափնջիկը յանկարծ չի ծնիր, պիտի չի ծնի. հեղինակ Reynolds այդպէս կը պահանջէ. մեկնաբանող Ծովիկը

պէտք է կարենայ այդ պատկերը գծել ստեղնաշարին վրայ վերին հարագատութեամբ: Չէ՞ որ աշխարհի վրայ ինչ ինչ նորածիններ պէտք է ծնած ըլլային եւ չծնան - կիսաձայն, հազիւ ստեղծուած ձայնահնչիւնը պէտք է չծնած «մեռցնել» վերի պատկերը տալու համար. այդ արհեստավարժական կարելիութիւնը Ծովիկին գործն է եւ մենք ապրեցանք ա՛յդ իմաստով յղացուած կատարեալ ձայնաստիճաններու տողանցքը Ծովիկին նուագարանէն (դաշնակը իր տեսանելի եւ անտեսանելի բաղադրամասերով): Այս բոլորը եւ աւելին մենք ապրեցանք Ծովիկին հակակշռին տակ հեւացող-ճարճատող-աղաղակող դաշնակին անհամար ճաճանչներուն ընդմէջէն, մանաւանդ գերարդի առաջին եւ վերջին երկերուն պարունակէն.

Շար.բ էջ 19



ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES PRESENTS



ODE TO ARMENIA ԶՕՆ ԲԱՅԱՍՏԱՆԻ




We Remember and Demand

COMMEMORATING THE 100TH ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE

ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՅ

Armenian Society of Los Angeles Choir
 "Los Angeles Symphonists" Orchestra
 Music Director: Mikael Avetisyan
 Soprano: Nune Genjoyan
 Tenor: Suren Mkrtchyan
 Duduk: Ruben Harutunyan
 ISM Youth Choir
 Choirmaster: Lusine Meliksetyan

Լոս Անճելըսի Իրանահայ Միութիւն
 Լոս Անճելըսի Միմֆոնիք Նուագախումբ
 Ղեկավար՝ Միքայէլ Աւետիսեան
 Սօփրանօ՝ Նունէ Գէնճոյեան
 Թենոր՝ Սուրէն Մկրտչեան
 Դուդուկ՝ Ռուբէն Յարութիւնեան
 Միջազգային Երաժշտական Դպրոցի Երգչախումբ
 Խմբավար՝ Լուսինէ Մելիքսէթեան

October 25th, 2015 at 7:00pm.
 Glendale Presbyterian Church
 125 S. Louise St., Glendale, CA 91205

Ticket info & Reservation: (818) 241-1073

ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՅՈՒՇԵՆ ԱՂԶԿԱՆ ՄԸ ՍԻՐԱՀԱՐՈՒԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ աղջկան մը մօտ նկատելի են հետեւեալ նախանշանները, ուրեմն վստահաբար կարելի է ըսել, որ ան սիրահարուած է եւ յանուն իր ընտրեալին պատրաստ է դիմել իւրաքանչիւր խենթութեան:

Սիրահարուածութեան ընթացքին կնոջ աչքերը կը սկսին փայլիլ, կ'ուզէ յաճախ ժպտալ, սէր տալ բոլորին, որպէսզի անոնք նոյնպէս ուրախ ըլլան: Այս ժամանակ կը նկատուի նաեւ ցրուածութիւն:

Յանկուտիւն կը յառաջանայ հիանալի տեսք ունենալ օրուան ամէն պահուէն՝ նոյնիսկ խանութ երթալու ընթացքին, քանի որ աղջիկը կը կարծէ, որ հաւանաբար այդ նոյն վայրկեանին սիրածը պիտի յայտնուի իր ճամբուն վրայ: Աղջիկը կը գնէ նոր զգեստներ, հագուստներ, շարժի միջոցներ, կը փոխէ իր ոճը, սանտրուածքը: Նոյնիկա կը սկսի հետեւիլ իր մարմնի կազմուածքին՝ այցելելով մարզասրահ կամ սկսելով մարմնամարզութեամբ զբաղիլ:

Մշտապէս ցանկուտիւն կ'ու-

նենայ հեռաձայնելու կամ հաղորդագրութիւն գրելու անոր՝ թէկուզ անանց առիթի, պարզապէս գիտնալու համար, թէ ինչով զբաղած է ան եւ ինչ կը ծրագրէ ընել երեկոյեան:

Հետաքրքրութիւնը կը մեծնայ աստղաբաշխութեան նկատմամբ եւ եթէ այնտեղ որեւէ բացասական միտք գրուած ըլլայ, սիրահարուած աղջիկը չի հաւատար՝ մտածելով, որ սխալմունք եղած է:

Պատկերասփիւռ դիտելու փոխարէն ան ժամանակ կ'անցնէ իր սիրելիին հետ: Անհասկնալիօրէն նախանձի զգացում կ'ունենայ:

Սիրահարուած աղջիկը անսպասելիօրէն ձեռք կը բերէ նոր հետաքրքրութիւններ, օրինակ՝ կը դառնայ ֆոթոթուրիստ, կը համաձայնի երթալ ձիարաստան, կը խօսի ինքնաշարժներու մասին եւ այլն: Օրուան ընթացքին քանի մը անգամ կը փոխուի անոր տրամադրութիւնը՝ բնականաբար անսահման երջանկութենէն մինչեւ ջղախին տեսարաններ:

ՍԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՊԱՌՊԱՆԵԼ

Ուսումնասիրելով սէր երեւոյթը՝ հոգեբանները եկած են այն եզրակացութեան, որ իրականութեան մէջ սիրահարուելը շատ դիւրին է, աւելի դժուար է պահպանել այդ զգացումը եւ ծունկի չի ջնջել տարբեր դժուարութիւններու առջեւ: Իսկ ինչպէ՞ս կարելի է պահպանել սէրը:

Նոր հետաքրքրութիւններ եւ անհատական զարգացում.

Մարդը միշտ կը փորձէ զարգանալ, ձեռք բերել նոր գիտելիքներ, հմտութիւններ, հետաքրքրութիւններ, փորձ: Այս ամէնը առաւել աշխոյժութեամբ կը կատարուի, երբ ան կը սիրահարուի:

Այս ընթացքին ան կը հանդիպի նոր մարդոց, կը գտնէ նոր ընկերներ, կ'ապրի նոր զգացողութիւններ: Ասիկա բնական գործընթաց է, որ բնորոշ է բոլոր զոյգերուն: Իսկ բաժանման պարագային տեղի կ'ունենայ յետընթաց, քանի մարդիկ կը կորսնց-

նեն իրենց ձեռք բերած ամէն ինչը:

Յարաբերութիւնները պահպանելու համար պէտք է մշտապէս նոր երեւոյթներ փնտռել կամ ստեղծել: Սկզբնական շրջանին (6 ամիսէն մինչեւ 1 տարի) կարելի է բաժնել գաղտնիքները, պատմել հետաքրքրութիւններու եւ երազանքներու մասին:

Սակայն անկէ ետք զարգացումը կանգ կ'առնէ: Այնուհետեւ կարելի է զաւակ ունենալ, քանի որ զաւակի մեծնալուն գուրդն-թաց, նոր աշխարհ կը բացուի անոր ծնողներուն համար, կամ փորձել գտնել նոր հետաքրքրութիւններ, որոնք հաճելի պիտի ըլլան զոյգերուն համար:

Ըստ հոգեբաններուն՝ մշտապէս միասին ժամանակ անցնելը նոյնպէս կատարեալ չիմարութիւն է: Պէտք է ունենալ անձնական կեանք, որ պիտի հետաքրքրէ զուրկները, եւ դուք պիտի ըլլաք անոր ուշադրութեան կեդրոնին:

ՉՄԵՐՈՒԿԸ ԼԻՊՈՒՄԻ ԵՒ ԱՐԾԱԹ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԸ

Ձմերուկը հարուստ է հակաօքսիտանդ եւ հակաուռուցքային յատկութիւններ ունեցող քարոթինային նիւթ՝ լիպոթինով, որ չի բաժնուի ջերմային մշակման ժամանակ:

Ձմերուկի 100 կրամ պտղամիսը կը պարունակէ մարդու մարմնին անհրաժեշտ C վիթամինի մէկ օրուան չափաբաժինի 9 տոկոսը, սիլիցիոլմի՝ 40, քալիումի՝ 9.4, երկաթի՝ 4: Ձմերուկը կը պարունակէ նաեւ արծաթ՝ 7.1 տոկոս:

Ձմերուկը շատ օգտակար է, եթէ ուտէք առաւօտեան՝ 5:00-

7:00-ի ընթացքին, քանի որ այդ ժամերուն մարմինը ունի հեղուկի պէտք, որպէսզի լեղապարկէն դուրս հանուի օրուան ընթացքին կուտակուած թոյնը՝ լեղիի հետ:

Արծաթը ունի հակամանրէ յատկութիւն, սիլիցիոլմը կը նպաստէ դիմադրողականութեան բարձրացման, եւ այլն: Ա. Ամասխացիի ձմերուկի բուժիչ յատկութիւններու մասին գրած է. «Ձմերուկը օգտակար է տենդի պարագային, իսկ եթէ գալն ուտեն քաջախի ու մեղրի հետ, անիկա կը մաքրէ միզապարկը»:

ԻՆՉՈՒ ԱՅԴՔԱՆ ՀԱՃԵԼԻ Է ԲԱՐԵԿԱՍԱՆԱԼ ԸՆԹԵՐՑԱՄԵՐ ՄԱՐԴՈՑ ՀԵՏ

Շատ դժուար է գտնել մարդիկ, որոնք կ'ընթերցեն հաճոյքի համար, ոչ՝ ստիպողաբար: Եւ նման ընթերցասէր մարդոց հետ շատ հաճելի է ծանօթանալ, իսկ ինչո՞ւ:

Իբրեւ կանոն, անոնք ունին շատ նուրբ հոգի՝ Ընթերցելու ընթացքին մարդիկ կը ծանօթանան այն իրականութեան, որ կը շրջապատէ զիրենք: Ասիկա կ'օգնէ զարգացնելու իրենց մտահորիզոնը ու տեսակէտը: Ընթերցանութիւնը կը նպաստէ գիտելիքներու բարձրացման եւ աւելի համբերատար ու հանդուրժող կը դարձնէ մարդը: Անիկա կը ստրկեցնէ անոնց գնահատել իւրաքանչիւր մանրուք:

Անոնք աւելի իմաստուն եւ զարգացած են՝ Որքան շատ կ'ընթերցէք, այնքան աւելի խելացի եւ բազմակողմանի զարգացած կը դառնաք: Ընթերցասէր մարդիկ աւելի դիւրութեամբ կ'ընկալեն տեղեկութիւնը եւ անոնց հետ հաճելի է բարեկամանալ, քանի որ խօսելու ընթացքին շատ հազուադէպօրէն կը լսէք «չեմ գիտեր» բառը:

Անոնք ունին ստեղծագործ միտք՝

Ստեղծագործ միտքը շատ կարեւոր է յարաբերութիւններու մէջ, քանի որ մէկ տարի շփուելէ ետք արդէն շատ դժուար է դիմացինը հետաքրքրել կամ գարմացնել: Սակայն այն մարդը, որ շատ կ'ընթերցէ, սպունգի նման կ'իւրացնէ հեղինակներու մտքերը, որոնց մասին ան մինչ այդ չէր գիտէր: Եւ եթէ կ'ուզէք երկարատեւ յարաբերութիւններ սկսիլ, ընտրեցէք ընթերցասէր մէկը:

Անոնք հոգիով դեռ մանուկ են՝ Նման մարդիկ կարծես մանուկ ըլլան, անոնք հիանալի կերպով պիտի դաստիարակեն իրենց գաւակները: Միայն ընթերցասէր մարդը կրնայ իր փոքրիկին պատմել բազմաթիւ հեքիաթներ՝ նոյնիսկ յորինել:

Անոնք աւելի կը բոտ սիրեկան-

ներ են. Այս տեսակ մարդիկ յաճախ կը կարգան սիրային նկարագրութիւններ, եւ բնականաբար ընթերցասէր մարդիկ աւելի մեծ երեւակայութիւն ունին այս հարցով:

- Անոնք աւելի համբերատար են՝

Քանի որ գիրքը կարգալու եւ աւարտելու համար կը պահանջուի տեւական ժամանակ (օրեր, եթէ ոչ՝ շաբաթներ), հետեւաբար, պէտք է համբերատար ըլլալ: Ուստի, անոնք աւելի համբերատար ու հանդուրժող են:

Ընթերցասէր մարդիկ շատ բան կրնան սորվեցնել դիմացինին՝ Արդէն նշեցինք, որ ընթերցասէր մարդիկ շատ բանիմաց են, քանի որ անոնք կը սիրեն նոր գիտելիքներ ձեռք բերել: Հետեւաբար, անոնց հետ ծանօթանալով դուք միշտ նոր տեղեկատուութիւն կը ստանաք տարբեր ոլորտներու մասին:


- Անոնք իսկապէս գիտեն, թէ ինչ է ռոմանթիկ ըլլալ՝

Անոնք ունին ռոմանթիկ բնաւորութիւն, քանի որ գրեթէ բոլոր գիրքերուն մէջ գլխաւոր հերոսները միասին կ'ըլլան միայն շարք մը դժուարութիւններ եւ խնդիրներ յաղթահարելէ ետք: Եւ եթէ դուք ընկերութիւն ընէք ընթերցասէր մէկուն հետ, վստահ եղէք, որ ռոմանթիկ յարաբերութիւնները հեռու չեն:

- Անոնք գիտեն, թէ ինչ կը նշանակէ հոգատարութիւն՝

Գիրքը պատրաստուած է թուղթէ, որ փխրուն եւ դիւրաբեկ է: Իսկ ընթերցասէր մարդը մեծ հոգատարութեամբ կը վերաբերի իր սիրելի գիրքին, քանի որ օր մը ան անպայման գիրքը վերընթերցելու ցանկութիւն պիտի ունենայ: Սակայն ընթերցասէր մարդիկ շատ ուշադիր են ոչ միայն իրենց, այլեւ ուրիշի իրերուն նկատմամբ: Այն ամէնը, որ արժէքաւոր է ընթերցասէր մարդու համար, ան ինամքով եւ մեծ հոգատարութեամբ կը վարուի անոր հետ:

ՀՈՎԵՐԱՆԳԻՍ



ՄԻՀՐԱՆ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ մասուհի քառասունքին առիթով, Հոգեհանգստան պաշտոն պիտի կատարուի, Կիրակի, Հոկտեմբեր 25, 2015ին Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցու մէջ, 58 S. Sierra Madre Blvd., յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝
Ջաւակները՝
Տէր եւ Տիկ. Սահակ եւ Քրիսթին Կոստանեան եւ զաւակները՝ Էմըլի եւ Միթչըլ
Տէր եւ Տիկ. Գարլօ եւ Գարոլին Կոստանեան եւ զաւակները՝ Մաթիու եւ Ալեքս
Տիար Վաչէ Կոստանեան
եւ համայն Կոստանեան, Դաւիթեան, Փափազեան, Մելգոնեան, Պիլեմծեան, Տէր Գրիգորեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները:
Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐ

Շաբաուհաւուած էջ 7-էն

կան հողերը գրաւուած եւ պարպուած են այսօր: Ձէ՞ որ ուխտեցինք այստեստեւ չողբալ եւ չսպալ, բայց ուխտեցինք պահանջել եւ վերականգնել մեր հազարամեայ իրաւունքները, որոնք այլեւս երազներ չեն մեզի համար, այլ՝ սրբազան կոչ մեր ոտնահարուած պատիւը վերականգնելու:

Այսօր հետեւ՝ մեր անիրաւուած իրաւունքներու ազգային վերականգնումի ճանապարհին, պիտի չբաւարարուինք ո՛չ արտաքին եւ ո՛չ ալ ներքին շրթնալի ծառայութիւններով, որովհետեւ՝ խօսքը կը ցնդի, գործն է՛ մնայուն: Աշխարհ անգամ մը եւս իմացաւ որ ցեղասպանութիւն գործուած է մեր հազարամեայ սեփական հողին վրայ. այստեստեւ «բարեկամ» պետութիւններ իրենց ճանաչումներու միտմարական խօսքերէն անդին՝ պարտին մեզի մասակցիլ որպէս իրաւատէր եւ պահանջատէր:

Հետեւաբար՝ չփնտռենք մեր դժբախտութեան պատասխանատուութիւնը օտար պետութեանց շահամոլ քաղաքականութեան մէջ, այլ մեր ցաւազին վիճակին պատճառները փնտռենք մեր ներքին տկարութեան եւ պառակտումներուն մէջ: Գիտակցինք եւ անցնինք գործնական քայլերու:

Այս առիթով կ'առաջարկեմ որ Տիարանակերտի Ս. Կիրակոս վերանորոգուած եկեղեցին վերածուի առաջնորդանիստ մայր եկեղեցու:

Եւ թաթուլ Մ. Վրդ. Անուշեան, որ վերջերս հրատարած է կրօնական ժողովի առեւտրային թեմէն, առժամայէս եւ արժանայէս նշանակուի առաջնորդական տեղապահ ցնոր տնօրինութիւն: Թաթուլ Վարդապետ իր հոգեւոր եւ մտաւոր պատրաստութեամբ իր գործակիցներուն, եկեղեցական եւ աշխարհական, կրնայ պարարտ հող պատրաստել եւ կանխիկ մեր հաւատափոխ եղբայրներուն եւ բոլորներուն՝ իրենց ինքնութեան վերադառնալու նախապատրաստական բոլոր աշխատանքներուն մէջ, ինչպէս նաեւ հայերէնի ուսուցողութեան դասաւանդութիւններուն:

Մեր պարտականութիւնն ու պարտաւորութիւնն է, եւ պատրաստ ենք բացի բարոյական քաջալերանքէ նաեւ հոգալ բոլոր նիւթական ծախսերը նոր առաջնորդարանին, եւ ի հարկին նաեւ տրամադրել կամաւորներ-հոգեբան-բժիշկ, ուսուցիչ, բանասիր-քարոզիչ, թարգման, ընկերաբան, եւ այլք, որոնք մնայուն եւ երբեմն ալ ժամանակ առ ժամանակ իրենց մասնակցութիւնը պիտի բերեն այս աստուածահաճոյ եւ հայրենասիրական ՄեՄ գործին: Այս մարտահրաւէրը որպէս կոչ՝ յանուն մեր բիւրաւոր նահատակներուն, կ'ողջենք Պոլսոյ Պատրիարքութեան եւ անոր յարգարժան ազգային իշխանութեան:

ԿԱՄՔ, ԱՇԽԱՍԱՆՔ եւ ԿՈՐՈՎ՝ երեք ձիւքերն են որով՝ ջուրի վրայ թէ՛ ցամաքի, մարդ անպայման կը յաջողի:

ԽԱՐԲԵՐԴ-ԷԼԱԶԻԿ

Շաբաուհաւուած էջ 15-էն

Վիճակով «պահպանած» էին: Յոյս կար որ յաջորդ հարիւր տարիներու ընթացքին պիտի նորոգուէին...

Մեր խումբէն ճան Մայքըլ Գասպարեանի նախնիները իսրաէլցիներէն էին: ճանին հայրը լաւ գծագրիչ էր: Ան իր յիշողութեամբ գծած էր իր հօրենական տունը, քովի աղբիւրովը միասին: Երբ կը շրջագայէինք հայկական թաղերը, նկարը ցոյց տուինք հոն կեցած տղոց: Փոքրերէն մէկը «պէն պիլի-րիմ պու էվի» (ես գիտեմ այս տունը) ըսաւ եւ մեզ առաջնորդեց դիպի այդ տունը: Իրապէս որ շատ լաւ գծուած նկար էր եւ այդ իսկ պատճառով տունը գտանք: Պէտք էր տեսնել ճան Գասպարեանի դէմքին ժպիտը եւ ներքին ուրախութիւնը: Քիչ ետք սակայն, այդ սառած ժպիտին տակ կը տեսնէի սրտին ցաւը, իրականացած երազին ազդած աւերը այս եօթնամասուննոց բարի մարդուն անմեղ հոգին մէջ: Քարայաններուն նման, այս մարդն ալ ի՛ր հօր տան առջեւ կեցած, չէր կրնար ներս մտնել: Դուռը գարկինք: Կին մը եւ քանի մը աղջիկներ դուռը բացին: Բացատրեցինք թէ ո՞վ էինք մենք եւ հարցուցինք որ եթէ կրնանք ներս մտնել: «Պուշուրուտուգ» (հրամմեցէք) ըսաւ տան տիրուհին: Հագիւ ներս պիտի մտնէինք, տան «էրիկ մարդ»ը եկաւ եւ թոյլ չտուաւ որ ներս մտնենք, քանի որ

«Իրմէ հրաման չէինք առած»: Երկուտանի այդ անասունին մէջ խղճի ոչ մէկ նշոյլ մնացած էր: Արդեօք Աստուածային բարի գործ մը ըրած չէինք ըլլար եթէ քարի կտորով մը այդ մարդուն գլուխը ջարդէինք ... Ուրեմն խեղճ Պրն. Գասպարեանը պիտի չկարենար իր փափաքը ամբողջացնել ի՛ր հօր բնակարանը անգամի մը համար նոյնիսկ ներս մտնելով:

Գացինք Սբ. Յակոբ եկեղեցին տեսնելու: Ներողութիւն, «եկեղեցի» ըսի: Սբ. Յակոբ «եկեղեցի»ն միայն քարակոյտ մը մնացած էր, ճիշտ քովը խորունկ փոս մը փորուած, հաւանաբար ոսկի փնտռելու կամ քարակոյտի այդ մասն ալ գետնին հաւասարեցնելու:

Որպէս վերջաբան իսրաէլցի այս գլուխին, հոս կ'արժէ յիշել քանի մը նշանաւոր իսրաէլցի հայերու անունները (ամբողջական չեն բայց որպէս նմուշ՝ կ'արժէ): Այսպէս, Դուրա. Մայքըլ Յակոբեան, վերապրողներու մասին վաւերագրական, անձնական վկայութիւններու տեսանկյունէրը պատրաստողը, Համաստեղը, Ստեփան Մուկարը, Ներսէս Դ. Կաթողիկոսը (1156), Թլկատեցին (Յովհաննէս Յարութիւնեանը), Վահան Թոթովենցը, Ռուբէն Զարգարեանը, Դուրա. Կարպիս Տէր Եղիայեաի նախնիները եւ բազմաթիւ այլ մտաւորականներ եւ ազգային գործիչներ:

«Օրչիք Շէքէրի»ն անուշ ըրինք...

ՆԵՐՎԱՅԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԵՍԻԼԻ ՅԱՂՈԱՆԱԿ

Շաբաուհաւուած էջ 16-էն

Այսպէս, կրկին ու կրկին յանկարծայալ բոցափայլակները կամ գրեթէ անլսելի, ըսենք պարզականներով անորսալի ձայնաթրթռացումները նոր երազային շափարակներ կը գծագրէին մեր լսահորիզոնին վրայ: Այսպիսի բոցափայլակներ կամ փունջապար (stylus fantasticum) կը պատահին միայն երբ հեղինակ ու մեկնաբանող կը յաջողին ազատագրուիլ սորված ու ուսուցուած յատկագծերէ կամ գրելաձեռնէ: Այդ է պատճառը որ «ազատութիւն» եզրը պարզ իր պատմական ու դարափոխիչ (ստեղծագործեալ) «ԱԻԵՐ»ը գործած է. ու ահա այս գերարդի գործերը կը ճարձատեն իրենց անկապան քային բոցարձակութեամբ եւ աննախածրագրային խանգարող ու հրմշտկող յորձանքներով, իրենց իսպա՛ռ ու իսպա՛ռ խորհրդաւորութեամբ, ինչպէս օրինակ Reynolds-ի 1964ի ստեղծագործութիւնը: Կրնայ քեզի այնպէս թուիլ որ կարծես... փիսիկ մը ցատկուտած է ստեղնաշարերուն վրայ եւ 80ամեայ հեղինակը այդ ձայները նոթագրած է երեւակայական «Pianist»ի մը համար, մինչդեռ լրջաբար հեղինակը նստեր օրերով աշխատել է եւ գիտութիւնթէքնիք-ներիմացութիւն թափել է հոն՝ իւրաքանչիւր նախադասութեան վրայ, բայց մասնաւոր կըրցած է հոն, այդ ձայն-հատուածին մէջ փթթեցնել երեւակայութեան, ազատութեան եւ անբընաբարելի քմայքի անհատական ամբողջական շեւտեցրը:

Ինչպէս կ'երեւայ, արդիականութեան հետ կապուած նորութիւններն ու նորարարութիւնները անասման են, տարատեսակ, յաճախ ալ բանականութիւնը խախտող արտաերաժշտական, սեղ-սեղ ալ... ոչ-ստեղնաշարային, երբ նուագողը

կը խաղայ նուագարանին ներքին աղիքներուն հետ, կամ ալ ամբողջ արմուկով կամ բազուկներով յարձակում կը գործէ՛, անմեղե գործիքին սեւ-սպիտակ ստեղնաշարին վրայ (վրիժառութեան նման բան մը), նաեւ անոր փորին մէջի լարերը կը «փետտէ»-ի խնդիր նոր ձայներու, նոր հպումներու եւ երեւակայութեան վեր ու անդին բայց կրկին երեւակայելի ձայնամիջոցներու հնարքներով յուսթի:

Միւս կողմէ գերարդի հեղինակ J. Corigliano կը ներշնչուի զօրօրինակ Պէթհովմի 7րդ Համանուագին մէջ մշտապէս լսուող կրկնումներէն (Բ. Շարժ) որոնցմով կը կազմէ իր «Ֆանթազիա»ին գրատաղձը: Իսկ R. Reymonds ձայնցողած է «ձայնատարած քայնութիւն»ի (sound spatialization) մեծ հնարիչ ու տարածիչ: Ան, հետաքրքրականօրէն, Մովիկին նուագած գործը կոչած է «Ֆ. Դայնակահարի համար» (ոչ դայնակի կամ դայնամիկ) եւ դայնակահարին տասը մատերը օգտագործուած են որպէս տասը երաժշտական տարբեր նուագարաններու ստեղծիչ... մեկնելով միայնակ դայնակէն (դայնակի ժամանակաւոր անջրպետացում):

Այս մօտ 20 րոպէ տեւող կտորը ներկայացուցեցաւ... երկու հոգիով: Մովիկին կից նստող երիտասարդը «թափող տերեւները» հաւաքող թերթահաւաքէր, այսինքն կտորին իւրաքանչիւր էջը որ դուռած էր դայնակին տետրակալին ամբողջ երկայնքին, հարկ էր մէկ առ մէկ հաւաքել նուագութիւն անմիջապէս ետք: յաջորդ էջը պարզելու համար նուագողին դիմաց:

Մովիկի Մկրեան-Մարգարեան ունի դուտար մը որ կ'ուսանի Տէյվիս համալսարանին ներս:

Կը շնորհաւորենք ի խորոց սրտի սօքոթօր Մովիկը եւ իրեն կը մաղթենք բեղմնաւոր ճանապարհ:

JOB OPPORTUNITY
ConnectTo Security has an immediate opening for an alarm installer position. Training will be provided. Must speak English well. www.ConnectTo.com
Please email resume to: jobs@ConnectTo.com; call 818-546-4602

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ
Connect To Security ընկերութիւնը կարիքը ունի alarm տեղադրող պաշտօնէտայի մը: Մենք կը մարզենք թեկնածուն: Լաւ Անգլերէն գիտնալը պայման է:
Հետաքրքրուողները կրնան ի-նամակ ուղարկել jobs@ConnectTo.com հասցէին եւ կամ հեռաձայնել 818-546-4602: www.ConnectTo.com:

«ԲՈՐՈՒՄԻԱՅԻ» ԴԵԿԱՎԱՐ. ՀԵՆՐԻԽ ՄԻԽԱՅԻՆՆԵՐ, ՀԱԲԱՆԱԲԱՐ, ՉԻ ՄԵԿՆԻ ԱՏՐՊԵՅՅԱՆ

Գործունեության «Բորուսիայի» գործադիր տնօրեն Հանս-Յոհաննես Վալդեն պատմել է, որ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միխայիլիանը, ամենայն հավանականութեամբ, չի մեկնի ատրպէյճանական «Գաբալայի» դէմ Եւրոպայի լիգայի երրորդ տուրի արտագնայ խաղին, որը կը կայանայ Հոկտեմբերի 22-ին Պաքուում:



«Միխայիլիանը, ամենայն հավանականութեամբ, չի մեկնի «Գաբալայի» դէմ հանդիպմանը: Մենք ուսումնասիրել ենք իրավիճակը: Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ կայ կոնֆլիկտ, իսկ մենք պէտք է հոգ տանենք մեր ֆուտպոլիստների մասին:

Բարդութիւններ կան անվտանգութիւնն ապահովելու հետ կապուած: Եթէ ֆուտպոլիստն իրեն յարմարաւէտ չզգայ եւ ունենայ վախի զգացում, ապա մենք, իհարկէ, հաշուի կ'առնենք այդ հանգամանքները»,- Վալդենը խօսքը մէջբերում է Bild-ը:

Աւելի վաղ ատրպէյճանական մամուլում լուրեր էին շրջանառում, որ Հենրիխ Միխայիլիանը չի կարող ստանալ Ատրպէյճանի մուտքի վիզա, քանի որ համարում է այդ երկրի սահմանն ապօրինի հատած անձ, իսկ Պաքու այցելելու դէպքում, կարող է նոյնիսկ ձերբակալուել: 2011թ. Դեկտեմբերին հայ ֆուտպոլիստն այցելել էր Արցախ եւ նուէրներ յանձնել Ղարաբաղեան պատերազմի մասնակիցներին:

Ատրպէյճանի ԱԳՆ մամուլի խօսնակ Հիկմետ Գաջիբեկովը ուշ յայտարարել էր, որ Ատրպէյճանը չի խոչընդոտի Միխայիլիանի մասնակցութեանը «Գաբալայի» դէմ խաղին:

ԵՒՐՕ-2016. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ

Շուէյցարիայի Նիոն քաղաքում Հոկտեմբերի 18-ին անցկացուեց Եւրո-2016-ի ընտրական մրցաշարից անցումային խաղերի հնարաւորութիւն ստացած թիմերի մասնակցութեամբ վիճակահանութիւնը:



Պոսնիա-Հերցեգովինա կը խաղայ Իռլանտայի հետ, Ուքրանիան կը հանդիպի Սլովենիային, Շուէդիան ու ժերը կը չափի Դանիայի հետ, իսկ Հունգարիային բաժին հասաւ Նորվեգիան:

Վիճակահանութիւնից առաջ Պոսնիա-Հերցեգովինան, Ուկրանիան, Շուէդիան ու Հունգարիան տեղ էին գտել առաջին զամբիւղում:

Այս փուլի առաջին հանդիպումները տեղի կ'ունենան Նոյեմբերի 12-14-ը, իսկ պատասխան խաղերը՝ Նոյեմբերի 15-17-ը: Յաղթողները կը նուաճեն Եւրոպայի առաջնութեան ուղեգիր:

Ուքրանիան, Շուէդիան, Պոսնիա-Հերցեգովինա եւ Նորվեգիան առաջին խաղերը կ'անցկացնեն տանը:

Յիշեցնենք, որ Եւրո-2016-ի եզրափակիչ փուլում մրցաշարի կազմակերպիչ երկիր Ֆրանսայի պէս իրենց տեղն արդէն ապահովել են՝ Անգլիան, Չեխիան, Իսլանդիան, Աւստրիան, Պորտուգալիան, Սպանիան, Շուէյցարիան, Հիւսիսային Իռլանդիան, Ուէլսը, Իտալիան, Բելգիան, Ալբանիան, Գերմանիան, Լեհաստանը, Ռումինիան, Ռուսաստանը, Սլովակիան, Խորուսթիան եւ Թուրքիան: Թուրքերը նման պատուի են արժանացել ընտրական 9 խմբերում երրորդ տեղ գրաւած թիմերի միջեւ լաւագոյն ցուցանիշն ունենալու շնորհիւ:

1984 թուականից յետոյ առաջին անգամ Եւրոպայի առաջնութիւնը կ'անցնի առանց հոլանդացիների, որոնք չորրորդ տեղն էին գրաւել ընտրական A խմբում (Չեխիա, Իսլանդիա, Թուրքիա, Հոլանտա, Ղազախստան, Լատուիա):

ՌԻԵՖԱ-Ն ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է ՍԵՐԲԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

«ՌիեֆԱ-ն ուշադիր հետեւում է իր անդամ 54 երկրների ազգային հաւաքականների եւ առաջնութիւնների խաղերին: Դա մօտ 32 հազար խաղ է տարեկան: Եթէ մենք դրանց հետ կապուած որեւէ կասկած ենք ունենում, ապա սկսում ենք հետաքննութիւն անցկացնել: Դա վերաբերում է նաեւ ձեր մատնանշած հանդիպմանը», - այսօր ՌիեֆԱ-ն պաշտօնապէս պատասխանել է սերբական լրատուամիջոցներին:

Բանն այն է, որ այդ երկրի ՁԼՄ-ները վերջերս անընդհատ մեղադրում են Ալպանիային Եւրոպայի առաջնութեան ընտրական փուլի վերջին խաղում Հայաստանի հաւաքականի ֆուտպոլիստներին կաշառելու եւ իրենց ձեռնտու արդիւնք ապահովելու համար: Սերբական «Կուրիր» թերթը անգամ նշել է, որ ինքնուրոյն հետաքննութիւն է անցկացնելու այդ կապակցութեամբ:

ՌիեֆԱ-ն դեռեւս պաշտօնական յայտարարութիւն չի կատարել Հայաստան-Ալպանիա խաղը հետաքննելու կապակցութեամբ, քանի որ սերբական լրատուամիջոցները ծանրակշիռ փաստեր եւ ապացոյցներ չեն ներկայացրել:

ԱՐԹՈՒՐ ԴԱԻԹԵԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ ԿՈՐՈՇՈՒԻ ԳԼԱԶԳՈՅՈՒՄ

Ամբողջական կազմով մեկնում ենք Գլազգօ, բայց տեղում կ'որոշուի Արթուր Դաւթեանի մասնակցութիւնը աշխարհի առաջնութիւնում: Առանց Արթուր Դաւթեանի աշխարհի առաջնութեան չենք մեկնի: Նա կը մասնակցի, քանի որ համոզուած եմ, մինչեւ Հոկտեմբերի 23-ը ամէն ինչ լաւ կը լինի:



Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ գրոյցում ասաց սպորտային մարմնամարզութեան Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Յակոբ Սերոբեանը:

Հայ մարմնամարզիկները մեկնում են աշխարհի առաջնութեան, որը տեղի կ'ունենայ Հոկտեմբերի 23-ից Նոյեմբերի 1-ը Շոտլանդիայի մայրաքաղաքում: Աշխարհի առաջնութիւնը միակ օլիմպիական վարկանիշային մրցաշարն է հայ մարմնամարզիկների համար: Վարկանիշի համար պայքարելու են Յարութիւն Մերդինեանը, Վահագն Դաւթեանը եւ Արթուր Դաւթեանը:

Սակայն Եւրոպայի պրոնոզ մետալակիր Արթուր Դաւթեանի մասնակցութիւնը վտանգուած է: Մարմնամարզիկը վերջին օրերին չի մարզուած առողջական ինդիքների պատճառով:

«Մինչեւ Ուրբաթ ամէն ինչ նորմալ էր, պլանաւորուած, ըստ ծրագրի էր: Մարզիկների ընդհանուր մարզավիճակը լաւ էր: Բայց Ուրբաթից ամէն ինչ գլխիվայր շուռ եկաւ, քանի Արթուրը Դաւթեանի մօտ, ով մեր ամենամեծ յօյան է աշխարհի առաջնութիւնում, առողջական ինդիքներ առաջացան, մասնաւորապէս շարունակական գլխապտոյտներ:

Փորձում ենք ամէն ինչ անել, գտնել, թէ ինչն է պատճառը: Կարծում եմ, որ մինչեւ մրցումների մեկնարկի օրը ամէն ինչ նորմալ կը լինի, բնականաբար այն կարգավիճակը չի ունենայ, ինչպիսին ունէր: Շատ մեծ յօյան ունէինք, քանի որ միայն Արթուր Դաւթեանն է մօտ օլիմպիական ուղեգրին, նա կը կարողանար վարկանիշ հաւաքել:

ՓԼԱԹԻՆԻՆ ՍՏԱՑԵԼ Է ՌԻԵՖԱ-Ի ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՖԻՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՈՒՄ

ՌիեֆԱ-ի նախագահ Միշէլ Փլաթինին ստացել է ՌիեֆԱ-ի գործկոմի աջակցութիւնը եւ պատրաստ է շարունակել պայքարը ՖիֆԱ-ի նախագահի արտահերթ ընտրութիւնում, հաղորդում է Mundo Deportivo-ն:



ՖիֆԱ-ի էթիկայի կոմիտէն Հոկտեմբերի 8-ին Փլաթինին, ՖիֆԱ-ի նախագահ Յոզէֆ Բլատերին, ՖիֆԱ-ի գլխաւոր քարտուղար Ժերոմ Վալկէին 90 օրով հեռացրել է ֆուտպոլային գործունէութիւնից: Այդ ժամկէտը կարող է երկարաձգուել եւս 45 օրով:

ՌիեֆԱ-ի գործկոմի արտահերթ նիստում մասնակիցների մեծ մասը աջակցել է Փլաթինիի թեկնածութիւնը, թէեւ եղել են նաեւ գործկոմի անդամներ, որոնք պահանջել են նրա հրաժարականը:

Շուէյցարիայի արդարադատութեան դաշնային բիւրոն քրէական գործ է յարուցել Բլատերի դէմ, որը կասկածուած է նաեւ Փլաթինիին 2 միլիոն շուէյցարական ֆրանկ անօրինական փոխանցելու մէջ: Շուէյցարական իշխանութիւնները յայտարարել են, որ այդ հետաքննութիւնում Փլաթինիի կարգավիճակը տատանում է վկայի եւ մեղադրեալի սահմաններում:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Շաբ.ք էջ 7

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Email: -----